

2437


Грунт

Инструкциям прилагается
двухсерийный 19-го года номер
Грунт

9(47)

Г-89

1937



2011-07

Պ. ԳՐՈՋԳՈՎ

24 JAN 2006

ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՔԱՅՔԱՅՈՒՄԸ 19-ՐԴ ԴԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԻՆ

9(47)
7-89

Հ. Խ. Ս. Հ. ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 24

Հ Ե Ռ Ա Կ Ա Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

№ 24

9(47)

Դ-89

Պ. ԴՐՈՉԴՈՎ

ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՔԱՅՔԱՅՈՒՄԸ
19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԻՆ

ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1937

04 APR 2013

2437

Խմբագիր Հ. ԽՈՒՇՈՅԱՆ
Թարգմ. ՆԻԿ. ՏԵՐ-ՄԱՆՎԵԼՅԱՆ
Սրբադրե՛ջ Գ. ՎՈՍԿԱՆՅԱՆ

Գլավիկա 4—8235
Հրատարակ. 15
Պատվեր 24
Տիւրաժ 2000



6247
41

Հանձնված է արտադրության 9 ապրիլի 1937 թ.
Ստորագրված է ապրիլ 15 ապրիլի 1937 թ.

Ուսուցիչների փորակավորման ինստիտուտի տպարան,
Յերեան, Մարքոսի փողոց 17

ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ 19-րդ դարի ԱՌԱՋԻՆ ԿԻՍԻՆ

Ռուսաստանի 19-րդ դարի առաջին կիսի ճորտատիրութեան և 60-ական թվականների բուրժուական ռեֆորմների նախադրւյալների մասին գոյութեան ունի ընդարձակ գրականութեան: Տասնյակ հեղինակներ, սխաժ Ն. Ի. Տուրգենևից և Ա. Պ. Չարլոցկիյ-Դեսյատովսկուց, գրել են անտեսութեան ճորտատիրական սխտեմի մասին նրա անկման նախորդակին: Պատմական գրականութեան մեջ վերջին 70—80 տարիների ընթացքում կուտակվել են հարյուրավոր աշխատութեաններ այդ թեմայի շուրջը: Յե՛վ սակայն, չնայած դրան, շատ բան ճորտատիրական անտեսութեան քայքայման պրոցեսում՝ այդ անտեսութեան կոնկրետ ձևերով և 1861 թվականի գյուղացիական ռեֆորմի անտեսական նախադրյալների հարցի մեջ ֆեոժալիտական հոսանքներով և վիճելի: Դեռ ավելին, մենք չպիտանք վոչ մի կոնկրետ-պատմական աշխատութեան, վորտեղ այդ հարցը գրված լիներ ամբողջութեամբ և գտած լիներ գիտական ճիշտ լուծում:

Ճորտատիրական անտեսութեան քայքայմանը նվիրված ամենաառաջին, բայց ամենից արժեքավոր աշխատութեաններից մեկը հանդիսանում է Ա. Պ. Չարլոցկիյ-Դեսյատովսկու հիշատակարանը «Ճորտատիրական գրութեան մասին Ռուսաստանում»¹⁾: Այդ հիշատակարանի մեջ, վոր գրված է դեռևս 19-րդ դարի 40-ական թվականներին, Չարլոցկիյ-Դեսյատովսկին գրել է ամբողջութեամբ անտեսութեան ճորտատիրական սխտեմի անտեսական

¹⁾ Ա. Պ. Չարլոցկիյ-Դեսյատովսկի, «Կոմս Պ. Դ. Կիսելյով և նրա ժամանակը», հատոր 4-րդ Ս. Պ. Բ., 1882 թ.:

անանկութեան հարցը և փորձել և ապացուցել, վոր այդ սխտեմն արգելակում և յերկրի արտադրողական ուժերի զարգացմանը և շահավետ չե նույնիսկ կարվածատերոջ համար: Զարլոցկիյ-Դե-սյատովսկին քննադատում և ճորտատիրական անտեսութունը վորպես լիբերալ, անգլիական կրտսիկ քաղաքատնտեսութեան գերքերից, վորի ջերմ հետևողն եր նա: Բանավեճից տաքացած ճորտատիրութեան պաշտպանների դեմ, նա հակված եր նույնիսկ գերազնահատելու վարձու աշխատանքի շահավետութունը ուսական կարվածատերերի համար 40-ական թվականների կոն-կրետ-պատմական պայմաններում: Նրա բերած որինակները բավարար չափով ստուգված չեն, իսկ յերբեմն ուղղակի անհավատալի յեն: Բայց չնայած դրան, Զարլոցկիյ-Դեսյատովսկու «Հիշատակարանը» մինչև մեր օրերը չի կորցրել իր գիտական նշանակութունը, վորովհետև մի քանի դեպքերում նրա վերլուծութունը ճիշտ և և փաստարկները չափազանց համոզիչ:

19-րդ դարի յերկրորդ կիսի և 20-րդ դարի սկզբի բուրժուա-կան պատմական գրականութեան մեջ ճորտատիրական անտեսութեան քայքայման հարցը համարյա չի դրվել: Բաղմաթիվ հեղինակներ մեծ մասամբ տվել են զուտ նկարագրական բնույթ ունեցող աշխատութուններ, վորոնք նվիրված են յեղի գլխա-վորպես կարվածատերերի իրենց իշխանութունն «ի չարը գործ դնելուն», ճորտատիրական գյուղի կյանքին, կարվածատերերի ծառաների կենցաղին, ճորտատիրական ինտելիգենցիայի դրու-թեանը և այլն:

1861 թվականի ճորտատիրական սեփորմից հետո առաջին տասնամյակներում բուրժուական պատմական գիտութունը ճորտատիրութեան անկման նախադրյալների հարցի նկատմամբ մի քայլ հետ և գնացել Զարլոցկիյ-Դեսյատովսկու համեմատու-թեամբ: ճորտատիրական անտեսութեան քայքայման պրորբեմը համարյա հանված և յեղի ուսումնասիրութունից և 60-ական թվականների սեփորմիներին մեծ մասամբ զուտ իրենցատեղական բացատրութուն են տվել: Այսպես օրինակ, գյուղացիական սեփորմի լավագույն իրագրեկներից մեկը, պրոֆ. Իվանյուկովը, 80-ական թվականների սկզբում հետևյալն և գրել. «Այն գե-տակցութունը, թե ճորտատիրական իրավունքը հանգիստում և մի արգելակ վորի առկայութունն անհնարին և զարճում Ռու-

սաստանի հետագա զարգացումը, տարածվում եր մեր հասարակու-թեան մեջ համընթաց այն ուժեղացող ազդեցութեան, վոր ունեւր Արեւմուտքը: Նրա գաղափարների և լուսավորութեան վրա Արե-ւմտեան Յեվրոպայի գաղափարների տարածման ուսումնասիրու-թեանը Ռուսաստանում միևնույն ժամանակ հանդիսանում և ճորտատիրական իրավունքի անկման պատճառների և այդ իրա-վունքի վերացման յեղանակի ուսումնասիրութուն: Թեև ներկա աշխատութունն իր համար նյութ և վերցրել միայն գյուղացիա-կան սեփորմի ժամանակաշրջանը, բայց նրա մեջ բավականաչափ պարզորեն յերևում և այն պատճառների կուտակումը, վորոնք առաջացրել են սեփորմը, այլև այն, թե ինչքան շատ բան ենք մենք պարտական Արեւմուտքին ճորտատիրական իրավունքի վոչնչացման գործում: Վոչ թե ուժի, այլ բանականութեան և մարդատիրական զգացմունքների գիմաց Ռուսաստանում ընկել և ճորտատիրական իրավունքը¹⁾»:

19-րդ դարի 90-ական թվականներին ազրարային հարցի սրման և ազրարային շարժման ուժեղանալու կապակցութեամբ իր ամբողջ հասակով ծառայում և ճորտատիրութեան մնացորդների պրորբեմը ուսական գյուղում: Այդ հողի վրա աճում և հետա-քրքրութունը ճորտատիրական անտեսութեան նկատմամբ և պահանջ և ծագում պարզաբանելու նրա սոցիալական-տնտեսա-կան ելութունն ու պատմական նշանակութունը: Սկսում են ուսումնասիրել ճորտատիրական անտեսութունը, տվել և անվել հաճախ են գրում այդ մասին և ամսագրային հոդվածներում, և հատուկ ուսումնասիրութունների մեջ:

Ուսումնասիրելով 19-րդ դարի վերջի ուսական գյուղի եկոնոմիկան, Վ. Ի. Լենինն իր աշխատութունների մեջ, վորոնք զբված են 90-ական թվականներին, տվել և ճորտատիրական անտեսութեան ելութեան հանձարեղ և միակ գիտական բնորո-շումը²⁾, ինչպես և ցույց և տվել, թե ինչպիսի ուղիներով և ըն-թացել նրա քայքայման պրոցեսը և ինչու վորոշ աստիճանի անտեսական զարգացումն անխուսափելի յե զարձրել ճորտատի-րական իրավունքի վերացումը³⁾:

1) Ի. Իվանյուկով. «ճորտատիրական իրավունքի անկումը Ռուսաստա-նում», էջ 4, Մ. Պ. Բ. 1882 թ.:

2) Լենին, յերկեր, հատ. 3-րդ, էջ 139—141.

3) Լենին, յերկեր, հատ. 1-ին, էջ 349—350.

Մասնագետ-պատմաբանները պետք է ոգտագործեյին վորպէս զեկազար միտք ճորտատիրական անտեսութեան լենինյան վերլուծութեանը և յերևան հանեյին ճորտատիրական անտեսութեան քայքայման պրոցեսը պատմական-կոնկրետ նյութի հիմունքով: Ընթանալով միմիայն այն ճանապարհով, վոր նշել և պրոլետարիատի մեծ մտածողը, կարելի յեր գիտականորեն լուծել տվյալ պրոբլեմը: Սակայն ճորտատիրութեան լենինյան գնահատականը տասնյակ տարիներ անտես և աննվել պատմաբանները կողմից: Նույնիսկ իրենց մարքսիստ անվանող պատմաբանները, որինակ՝ Մ. Ն. Պոկրովսկին, բացարձակ կերպով դուրս են յեկել այդ գնահատականի գեմ և հակադրել են նրան իրենց սեփական հայացքները, վորոնք մարքսիզմի հետ վոչ մի աննչութեան չունեն:

19-րդ դարի 90-ական թվականները վերջին հրապարակ և գալիս Պ. Ստրուվեն ճորտատիրութեան իր գնահատականով, վորը հակադրվում էր լենինյան գնահատականին:

Լենինը ճորտատիրութեան հիմնական հատկանիշներից մեկն էր համարում անտեսութեան բնական կարգը: Նա ապացուցել է, վոր ճորտատիրական կարգն իր ամբողջ ներքին կազմակերպութեամբ հարմարեցված էր բնական-անտեսական հարաբերութեաններին համար, այդ պատճառով էլ ապրանքների արտադրութեանը, շուկայի համար աշխատելը, հակասում էյին ճորտատիրութեան բուն էությունը և անխուսափելի կերպով տանում էյին նրան զեպի քայքայում: Կարվածատեր-ճորտատերերի հացի արտադրութեանը վաճառքի համար, վոր սկսվել էր յայն չափով 19-րդ դարի առաջին կիսին, խախտել էր ճորտատիրութեան հիմքերը և վերջիվերջո անհրաժեշտ էր դարձրել ճորտատիրական իրավունքի վերացումը:

Բոլորովին այլ սահմանում և տվել ճորտատիրութեանը Պ. Ստրուվեն: Նա ճորտատիրական անտեսութեանը համարում էր արամական-անտեսական կազմակերպութեան¹⁾: Բանավիճելով Լենինի հետ, Ստրուվեն գրել է. «ճորտատիրական կարվածատիրական անտեսութեանը արամական-անտեսական մի սեպ էր, վոր խորապէս մեխվել էր յերկրի բնատնտեսական մարմնի մեջ:

1) Պ. Ռ. Ստրուվե, «ճորտատիրական անտեսութեանը», էջ 139, Մոսկվա, հրատարակութեան Մ. և Ս. Մաբաշնիկովների 1913 թ.:

«Հացի արտադրութեանը վաճառքի համար» բոլորովին ճորտատիրական անտեսութեան էությունը հակասող մի բան չի յեղել, ինչպէս կարծում է մեր նորագույն անտեսական եվոլյուցիայի մի աչքի ընկնող ուսումնասիրող¹⁾, այլ, ընդհակառակը, կազմել է նրա շարժիչ դրդապատճառը և վորոշիչ նպատակը²⁾: Ասպետ կարվածատիրոջը, վորը հավաքում է իր գյուղացիներին բնական հողատուրք, Պ. Ստրուվեն հակադրում է ձեռնարկու-կարվածատիրոջը, վորը կազմակերպում է հացի ապրանքային խոշոր արտադրութեան կուրի միջոցով: Պ. Ստրուվեյի կարծիքով 16—18 դարի ուսական գյուղատնտեսութեան ամբողջ եվոլյուցիան ամփոփվում է Քնասպի ֆորմուլայի մեջ. Der Ritter virod Nandvirt («ասպետը դառնում է գյուղական տնտես»): Նրա կարծիքով, ուսական հին վոսչինային անտեսութեանը յեղել է միջնադարյան ասպետական տիպի անտեսութեան, վորը համարյա չգիտեր, թե ինչ է կուր: 16—17-րդ դարերում սկսվում է անտեսական հեղաշրջում, վորը «բնորոշվում է կոոսային աշխատանքի դրամական-անտեսական շահագործումը հետապնդող կոոսային ռեժիմի ծավալումով և ամրանալով: Այդ բնորոշումն ինքնաբերական միտք է հղացնում ճորտատիրական անտեսութեան այդտեսակ դարգացման կապի մասին հացի գները վորոշ եվոլյուցիայի հետ³⁾»: 18-րդ դարի յերկրորդ կիսին այդ հեղաշրջումը վերջանում է կոոսային սիստեմի և դրամական անտեսութեան կատարյալ հաղթանակով: Ռուս կարվածատերը միջնադարյան ասպետից վերջնականապէս դառնում է գյուղատնտեսական ձեռնարկու:

ճորտատիրական անտեսութեանը համարելով ապրանքային դրամական տիպի խոշոր անտեսութեան, Պ. Ստրուվեն դրանով իսկ բացատրում է սկզբունքային տարբերութեանն ու հակադրութեանը ճորտատիրական և կապիտալիստական արտադրութեանների մեջ: Կարվածատիրոջ ճորտատիրական անտեսութեանը, վոր հիմնված էր գյուղացիների՝ իրենց ինվեստարով կատարվող կոոսային աշխատանքի, գյուղացիական ծխերի (ТРАПЛО) շահագործ-

1) Ստրուվեն նկատի ունի Լենինին, վորը գրեքը—«կապիտալիզմի դարգացումը Ռուսաստանում»—նա ներկա գեպքում քաղվածորեն մեջ է բերում:
2) Պ. Ռ. Ստրուվե, «ճորտատիրական անտեսութեանը», էջ 159.
3) Նույն տեղը, էջ 23—24.

ման վրա, Պ. Ստրուվեն հակադրում է վոչ թե խոշոր կապիտալիստական տնտեսութեանը, այլ գյուղական մանր տնտեսութեանը: Նրա կարծիքով, կոռուպիւն սխառեմը գյուղատնտեսութեան մեջ 19-րդ դարի առաջին կիսին գուրս է մղել հողատուրքային սխառեմը վորպէս հետեանք այն միեւնոյն որենքի, վորով կապիտալիստական գործարանը հաղթում է մանր արտադրողին: «Կոռու, այսպիսով, հաղթեց հողատուրքին (բտնրա) այն պատճառով, վոր նա հանդիսանում էր տնտեսապէս ավելի ներդաշնակ և ուրեմն տնտեսութեան ավելի շահավետ կազմակերպութեան: Ավելի սլարդ ասենք. կոռուպիւն տնտեսութեանն ավելի բարձր էր բահրայից՝ խոշոր տնտեսութեանների ընդհանուր և հայանի առավելութեանների շնորհիվ մանր տնտեսութեանների հանդեպ՝ սլարանքների արտադրութեան և վաճառահանութեան ասպարեզում և, բացի դրանից, շնորհիվ ուռս գյուղացի-հողագործի պատմական անպատրաստականութեան սլարանքային արտադրութեան մեջ¹⁾»: X

Համարելով ճորտատիրական կոռուպիւն տնտեսութեանը և կապիտալիստական տնտեսութեանը միատեսակ պատմական տիպի արտադրութեան, Պ. Ստրուվեն վերացնում է մեջտեղից ճորտատիրութեան քայքայման և բուրժուական հեղաշրջման անհրաժեշտութեան հարցերը, այն հեղաշրջման, վորը պետք է մաքրեր ճանապարհը կապիտալիստական դարգացման համար: Կապիտալիզմը, Պ. Ստրուվեյի կարծիքով, կազմակերպվել է Ռուսաստանում 60-ական թվականների բուրժուական ռեֆորմներից շատ առաջ և այդ վոչ միայն կապիտալիստական մանուֆակտուրայի և կապիտալիստական գործարանի ձևով արդյունաբերութեան մեջ, այլ նաև ճորտատիրական կոռուպիւն տնտեսութեան ձևով: Կալվաճատիրական կոռուպիւն տնտեսութեանը 19-րդ դարի առաջին կիսին յեղել է վոչ այլ ինչ, քան «հացի գործարան»: Այս պատճառով էլ Պ. Ստրուվեյի կարծիքով վոչ մի խոսք չի կարող լինել ճորտատիրական տնտեսութեան վորեւէ քայքայման մասին: «Կոռուպիւն-ճորտատիրական տնտեսութեանը «լիկվիդացիայի յե յենթարկվել» իր ծաղկման մոմենտում²⁾»: Ճորտատիրական իրավունքի վերացումը ծագել է վոչ թե ճորտատիրա-

¹⁾ Պ. Ֆ. Ստրուվե, «ճորտատիրական տնտեսութեանը», էջ 154.

²⁾ Պ. Ֆ. Ստրուվե, «ճորտատիրական տնտեսութեանը», էջ 154.

կան արտադրութեան մեջ գարգացած ներքին հակասութեաններին, — այդ տեսակ հակասութեանների առկայութեանը Պ. Ստրուվեն վճռականորեն բացատրում է, — այլ նրանից, վոր շուկան հետ էր մտնում արտադրութեանից¹⁾: «Հացի գործարան» ունեցող ճորտատեր-կալվաճատերը կարիք ուներ վաճառահանութեան արագ մեծացող շուկայի: Այդ տեսակ շուկա կարելի յեր նվաճել միայն յերկաթուղիների ցանցի կառուցմամբ, իսկ դրա համար պահանջվում էր ճորտատիրական իրավունքի վերացումը: Այն վերջնական յեզրակացութեանը, վորին հանգում է Պ. Ստրուվեն, կայանում է հետևյալում. «Սոցիալական ներքին հարաբերութեանները հողագործութեան իսկ մեջ չեն նախապատրաստել բռնի աշխատանքի վերացումը, բայց այդ չի նշանակում, վոր ճորտատիրական տնտեսութեան լիկվիդացիան տնտեսական անհրաժեշտութեան չէր: Մարդկային գործերը վոչ միայն անցյալի և ներկայի անհրաժեշտութեանն ունեն, այլև սպազայի անհրաժեշտութեանը: 50-ական և 60-ական թվականները տնտեսական սպազան ձգել էր իր հակայական սովերը ճորտատիրական տնտեսութեան վրա և դարձրել էր այդ տնտեսութեանը սնանկ, չնայած նրա ծաղկմանը: Ռուսաստանի վրա յեր գալիս Արևմտյան Յեվրոպայի տեխնիկան իր բոլոր ձևերով, արդյունաբերական տեխնիկայի ձևով և, մանավանդ, արանսպորտային և միլիտարական տեխնիկայի ձևով: Յերկաթուղիներով կարատված Ռուսաստանը, վորտեղ այդ յերկաթուղիներ անցկացնելը մի ամբողջ հեղափոխութեան նշանակութեանն ուներ տնտեսական պայմաններում, չէր կարող տանել բռնի աշխատանքի կապանքները: Այսպիսով փետրվարի 19-ի ռեֆորմն իր տնտեսական իմաստով և բովանդակութեամբ վոչ այնքան անցյալի և ներկայի հանրագումարն է տվել, վորքան հաշվի յե առել սպազան, շատ մոտիկ սպազան, վորից չէր կարելի փախչել վոչ մի դռնով: Այն յեզրակացութեանը, վորին յես յեկել էմ, ասում է, ճորտատիրական տնտեսութեան ներքին դարգացումը չէ, վոր հասցրել է նրան լիկվիդացիայի²⁾»:

Պետք է ասել, վոր Պ. Ստրուվեյի հայացքները ճորտատիր-

¹⁾ Նույն տեղը, էջ 138.

²⁾ Պ. Ֆ. Ստրուվե, «ճորտատիրական տնտեսութեանը», էջ 155—156 (ընդգծումն իմն է—Պ. Գ.):

րական տնտեսութեան զարգացման մասին 19-րդ դարի յերկրորդ կիսին կրում են մեծ հետևողականութեան կնիք: Այդ հայացքները, ճշտորեն կապված լինելով նրա ամբողջ պատմական ըմբռնման հետ, աչքի յեն ընկնում նաև վորոշակի քաղաքական նպատակներով:

90-ական թվականների վերջին, յերբ Պ. Սարուվեն սկսել էր գրել ճորտատիրական տնտեսութեանը նվիրված իր հոդվածները, ռուսական հասարակական կյանքի առաջնահերթ հարցն էր պրուսական կամ ամերիկական ազրաբային բուրժուական զարգացման ուղու հարցը: Ռուսական բուրժուազիան, վորի զազափարախոսներից մեկն էր Պ. Սարուվեն, ձգտում էր վերացնել կապիտալիստական զարգացման ճանապարհին կանգնած արգելքները, ցարիզմի և կալվածատեր ճորտատերերի հետ համաձայնութեան գալու, բարձրից արվող չափավոր ռեֆորմների ոգնութեամբ: Ճորտատիրական տնտեսութեան մասին գրած իր հոդվածներում Պ. Սարուվեն փորձում էր պատմականորեն հիմնավորել բուրժուազիայի քաղաքական պատճառները, կալվածատերերի հետ խաղաղորեն «միակցվելու» նրա հակումը: Իսկապես, յեթե բուրժուական հեղաշրջումն արդեն իրագործվել է բավական հեռավոր անցյալում—16—18-րդ դարերում,—յեթե խոշոր արտադրութեանը և ապրանքային գրամական տնտեսութեանն արմատացել է մեկուկես-յերկու դարի ընթացքում և վերջապես, յեթե կալվածատիրական-ճորտատիրական տնտեսութեան և կապիտալիստական տնտեսութեան մեջ չկան սկզբունքային տարբերութեան և հակադրութեան, ապա այսպիսով ներկայումս վերացվում են հեղափոխական հեղաշրջման խնդիրները, ճորտատիրական հողատիրութեան բռնի լիկվիդացիայի խնդիրները: Խոսք կարող է լինել միայն մի քանի խաղաղ բարենորոգումների մասին, վորոնց նպատակն է Ռուսաստանի սոցիալական-արևտեսական և քաղաքական կյանքի հետագա «կրոպականացումը»: Այսպիսի քաղաքական յեղրակացութեաններ են անխուսափելիորեն յեկնում Պ. Սարուվենի պատմական կոնցեպցիայից:

Պ. Սարուվենի հայացքները ճորտատիրական տնտեսութեան վերաբերմամբ մի փորձ են հանդիսանում՝ հիմնավորելու Ռուսաստանի կապիտալիստական զարգացման անխուսափելիութեանը պրուսական ուղիով: Այդ հայացքները արամաքծորեն հակադիր են Լենինի ռուսական ճորտատիրութեան մասին: Լենինը գիտականորեն ապացուցել է ճորտատիրական, կոռային տնտեսութեան և կապիտալիստական տնտեսութեան հակադրութեանը բուրժուական հեղաշրջման անկատարութեանը Ռուսաստանում և ռուսական հեղափոխութեան բուրժուական-դեմոկրատական փուլի անխուսափելիութեանը: Սակայն չնայած այն հանգամանքին, վոր ճորտատիրութեանը Լենինի աված պարզաբանութեանը միակ գիտական պարզաբանութեանն է հանդիսանում, նա յերկար ժամանակ անտես էր առնվում պատմաբանների կողմից, մինչդեռ Պ. Սարուվենի հակադիտական հայացքները զանազան վարիացիաներով կրկնում էին պատմաբաններն ու տնտեսագետները և ամենալայն ծավալումն էին ստանում պատմական գրականութեան մեջ: Այդ հայացքների ժողովրդականացմանն ուժեղորեն նպաստել է գրանց հարած Բողզանովի շիրլան հանձինս հենց իրեն Ա. Բողզանովի, ինչպես նաև Ն. Ա. Ռոժկովի, Պ. Ի. Լյաշչենկոյի և մանավանդ՝ Մ. Ն. Պոկրովսկու:

Մ. Ն. Պոկրովսկին համարում էր ճորտատիրական տնտեսութեանը «առևտրական կապիտալիզմի» բաղադրիչ մասը: Իր պատմական աշխատութեանները մեջ նա ցույց է տվել, վոր 16—18-րդ դարերի Ռուսաստանի ամբողջ եկոնոմիկան վերակառուցված և հարմարեցված է յեղել առևտրական կապիտալի շահերին: Գյուղացուն շահագործելու նպատակներով առևտրական կապիտալը վորպես թե ոգտագործել է կալվածատիրոջը, վորը և այսպիսով զարձեցել է «առևտրական կապիտալի գործակալը», առևտրական գործակատարը՝ գյուղից հավելյալ արտադրութեան դուրս ձծելու գործում: «Կոռային տնտեսութեանը,—գրել է Մ. Ն. Պոկրովսկին,—ամենից ուղիղ և անմիջական միջոցն էր գյուղացուց «հավելյալ արտադրանք», քամելու, վորն անհրաժեշտ է առևտրական կապիտալին¹⁾»

1) Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսական կալուտորայի պատմութեան ուրվագծեր», մասն 1, էջ 130, 2-րդ հրատ. Մոսկվա, «Մեր» հրատարակչութեան, 1917 թ.

Ճորտատիրական տնտեսութեան ծագումը Մ. Ն. Պոկրովսկին հետեյալ կերպով է պատկերացնում. «Առևտրականին-կապիտալիստին, ինչպէս մենք ստացինք, հարկավոր է վոչ միայն ըստ հնարավորութեան թանգ ծախել, այլև ըստ հնարավորութեան եժան առնել, նա ձգտում էր վերցնել գյուղացուց արտադրանքը մինչմալ գնով: Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր դարմանալի կլիներ սպասել գյուղացուց ղեջողութեան այդ հարցում իր՝ գյուղացու բարի կամքով: Հարկավոր էր ստիպել նրան ծախելու իր հացը չնչին գնով: Մասամբ շեղակի միջոցներով այդ բանն անում էր պետութեանը, վորը, ինչպէս մենք տեսնք, գտնվում էր առևտրական կապիտալի գորեզ ազդեցութեան տակ. պետութեան ղիտութեամբ ու թուելլութեամբ կապարտուները հարբեցնում էյին ժողովրդին, վորն այդ ղեպքում խմելու վրա յեր վատնում վոչ միայն հացը, այլև առհասարակ իր բոլոր ունեցվածքը: Բայց, իհարկե, այդ տեսակ ոժանդակ միջոցներով առևտրական կապիտալի տնտեսութեանը ղիմանալ չէր կարող, նրան սիտակ էր հարկավոր: Այդ սիտակն նա գտավ պատրաստի հանածինս ճորտատիրական իրավունքի: Կարվածատերը սիրով հանձն առավ քամելու գյուղացուց «հավելյալ արտադրանքն» իհարկե այն պայմանով, վոր մասնակցե շահին»: Կարվածատերն ստանում էր առևտրական շահի (ընդգծումն իմն է—Պ. Դ.) նըշանավոր մասն իր ոգտին (նույնիսկ շատ նշանավոր մասը— իրենց քիչ բան էր մնում, գանգատվում էյին առևտրականները), իսկ ղրա փոխարեն մատակարարում էր շուկային հնարավորութեան ծայր աստիճանին հասցրած եժան հաց: Դա այնքան էլ հասարակ գործարք չէր, ստիպված էյին կարվածատիրական տընտեսութեան ամբողջ մեխանիզմն այդ նպատակին հարմարեցնել, կարվածքը ղարձնել «հացի արտադրութեան գործարան»: Այսպիսի ճանապարհով ուսուսական հողի վրա կազմակերպվեց տնտեսութեան մի բոլորովին յուրահատուկ տիպ : շենց այս ժամանակ վրա հասավ փետրվարի 19-ի ռեֆորմը»¹):

Ընդունելով ճորտատիրական տնտեսութեան «առևտրական կապիտալիզմի» սիտակն բաղադրիչ մասը, Մ. Ն. Պոկրովսկին չէր

Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսական կուլտուրայի պատմութեան ուրվագիծը», մասն 1, էջ 114—115, 2-րդ հրատ. Մոսկվա, «Միք» հրատարակչութեան, 1917 թ.:

տեսնում և չէր կարող տեսնել ճորտատիրական և կապիտալիստական արտադրութեան հակադրութեանը: Ընդհակառակը, նրա տեսակետով կոռային տնտեսութեանը և ազատ վարձու աշխատանքի վրա հիմնված տնտեսութեանը հանդիսանում են միայն կապիտալիզմի յերկու տարատեսակ ձևերը, վորովհետե թե մեկ, և թե մյուս ղեպքում աշխատանքը կատարվում էր շուկայի համար՝ ղրամական յեկամուտ ստանալու նպատակով: Ճորտատիրական տնտեսութեան էյութեան նման ըմբռնման ղեպքում վերացվում է ճորտատիրութեան քայքայման ներքին պրոցեսի պրոբլեմը, պրոցեսի, վորը միացած է դասակարգային կատաղի պայքարի հետ և ճորտատիրական իրավունքի վերացման հարցը ղրվում է բոլորովին այլ մակարդակի վրա:

Հակասութեանների այն հանգույցը, վորը բերել-հասցրել է մինչև 1861 թվի փետրվարի 19-ի ռեֆորմը, Մ. Ն. Պոկրովսկին Պ. Բ. Ստրուվեչի և Պ. Ի. Լյաշչենկոյի նման տեսնում էր վոչ թե արտադրութեան վոլորտում, վոչ թե յերկու հակադիր արտադրական սիտեմների ընդհարման և ղրանցից մեկի քայքայման մեջ, այլ շուկայական հարաբերութեանների վոլորտում: Ճորտատիրական տնտեսութեան ճակատագիրը Ռուսաստանում նրա կարծիքով, ամբողջովին վորոշվել է հացի գների շարժումով և կախված է յեղել միմիայն այդ գներից: Կարվածատերը ձգտում էր ստանալ իր տնտեսութեանից վորքան կարելի յե ղրամական շատ յեկամուտ և նայած հացի գների մակարդակին, նրա համար շահավետ էր մի ղեպքում ոգտվել գյուղացիների կոռային աշխատանքից, իսկ մի այլ ղեպքում ազատ վարձու բանվորների աշխատանքից: Այսպիսով Մ. Ն. Պոկրովսկին ճորտատիրական իրավունքի գոյութեանը կապում է բացառապես կարվածատիրոջ շահագրգռված լինելու, ամենից շատ ղրամական յեկամուտ գլխելու հետ: Մ. Ն. Պոկրովսկու համար ղոյութեան չունեն 19-րդ դարի միջին տեղի ունեցած ամբողջ հին արտադրական սիտակն խոր ցնցումը, դասակարգային հակասութեանների խիստ սրվածութեանը, գյուղացիութեանը, վորպես տկախվ ուժ հասարակական հասունացող հեղաշրջման մեջ և այլն: Փոխանակ ուսումնասիրելու Ռուսաստանում տեղի ունեցած ֆեոդալական-ճորտատիրական ֆորմացիայի կապիտալիստականի վերածելու բազմակողմանի, բարդ և

հսկայական պատմական պրոցեսը, Մ. Ն. Պոկրովսկին տվել է ծայրահեղորեն հասարակացրած և վտիտ սխեմա, վորտեղ միայն կարվածատերերն են յեկամուտները մեծացնելու իրենց ձգտումով և հացի գները, վորոնք վորոշում են ամեն ինչ:

Ռուսական ճորտատիրական տնտեսության պատմությունը 18—19-րդ դարերում Մ. Ն. Պոկրովսկին պատկերացնում է հետևյալ ձևով:

Մինչև 18-րդ դարի 70—80-ական թվականները հացի արտահանությունը Ռուսաստանից՝ չնչին էր, հացի ներքին շուկան չափազանց նեղ էր և հացի գները գտնվում էին շատ ցած մակարդակի վրա: Այդ պատճառով էլ կարվածատերերը շահագործում էին գյուղացիներին գլխավորապես հողատուրքային սխտեմով և շահագործված չեյին ճորտատիրական իրավունքի պահպանության մեջ: Դա հիմք էր ծառայել ծավալելու կարվածատերերի մեջ ազատագրական գաղափարներ Յեկատերինա 2-րդի թագավորության առաջին տարիներում: Բայց 18-րդ դարի վերջերին Անդրիայում կատարված արդյունաբերական հեղաշրջման ազդեցության տակ սկսում է զարգանալ հացի արտահանությունը Ռուսաստանից և արագորեն սկսում են բարձրանալ հացի գները: «Այսպիսով Անդրիայում կատարված արդյունաբերական հեղաշրջումը հանդիսանում է յուրատեսակ հեղաշրջման յեղակուսուսական կարվածատիրական կարվածքում: Նա սկսում է դառնալ հացի արտադրության գործարան»¹⁾ Կարվածատերը գյուղացիների կոռային աշխատանքի վրա հիմնված կազմակերպում է հացի մասսայական արտադրություն արտաքին և ներքին շուկաներում վաճառելու համար: Տարեցտարի կարվածատերն ավելի մեծ պահանջ է զգում ճորտական բանուղ ձեռքերի: Դրանով է բացատրել Մ. Ն. Պոկրովսկին կարվածատերերի ազատագրական արամադրությունների թուլացումը և Յեկատերինա 2-րդի թագավորության յերկրորդ կիսի սեակցիոն բնույթը: «Գյուղացիների ազատագրական գաղափարը 18-րդ դարում սպանել են հացի գները», — գրել է նա²⁾:

1) Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսաստանի հեղափոխական շարժման ուղիագծեր 19-րդ և 20-րդ դարերում», էջ 21, 1924 թ.:

2) Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսաց պատմությունը հնագույն ժամանակներից», հատ. 3-րդ, էջ 97, 1933 թ.:

Կոռային աշխատանքի լայն կիրառումը ճորտատիրական կարվածքի մեջ 18-րդ դարի վերջում նպաստել է հացի արտանքային արտադրության աճմանը: Բայց կոռային աշխատանքի ցածր արտադրողականության հետևանքով գյուղատնտեսական արտադրության հետագա լայնացման հնարավորությունները ճորտատիրական կարվածքում բավականաչափ սահմանափակ էին: Կարվածատերը շուտով համոզվեց, վոր ազատ վարձու աշխատանքը շատ ավելի արդյունաբեր է կոռային աշխատանքից և ավելի շատ շահեր է խոստանում նրան: Մինչդեռ 19-րդ դարի առաջին քսանամյակի ընթացքում հացի արտահանությունը շարունակում էր ավելանալ, հացի գները բարձրանում էին և կարվածատերը ձգտում էր ավելի և ավելի լայնացնել իր «հացի գործարանը»: Վորչափ վոր այդ ձգտման ճանապարհին կանգնած էր կոռային աշխատանքն իր ցածր արտադրողականությամբ, այնչափով էլ կարվածատերը դառնում էր գյուղացիների ազատագրման կողմնակից: Այդ հողի վրա, Մ. Ն. Պոկրովսկու կարծիքով, աճեց 20-ական թվականների ազնվականական լիբերալիզմը և դեկաբրիստների շարժումը: «Ծամծեմված փաստը, վորն ընկած է առաջին գիտակցական հեղափոխության հիմքում միահեծանության դեմ, և վորը տեղի ունեցավ Ռուսաստանում, առաջին փորձը միահեծանությունը տապալելու համար — այդ ծամծեմված փաստը ուսական հացի արտահանությունն էր»¹⁾: Բայց հացի բարձր գները պահանջեցին արևմտաերոպական, հետևապես նաև Ռուսաստանի հացի բորսաներում միայն մինչև 1821 թիվը: Այդ ժամանակից սկսած նրանք սկսեցին կատասարոֆիկ կերպով ընկնել, հսկայական ազդեցություն գործելով ուսական ճորտատիրության վրա: Հացի գներն այնքան էին ընկել, վոր չեյին ծածկում արտադրության ծախսերը, վորոնք գոյություն ունեյին վարձու աշխատանքի կիրառման պայմաններում: Շուկայում վորպես հացի մատակարար իր տեղը չկորցնելու համար կարվածատերը պետք է արտադրեր այդ հացը վորչափ կարելի յե եժան. այս իսկ պատճառով էլ նա նորից դառնում է կոռային աշխատանքի ջերմ պաշտպան, վորը ձիշտ է, աչքի յե ընկնում իր ցածր արտադրողականությամբ,

1) Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսաստանի հեղափոխական շարժման ուղիագծեր 19-րդ և 20-րդ դարերում», էջ 20.

բայց դրա փոխարեն ամենաեթան աշխատանքն էր: Հացի ցածր քանքի պայմաններում դեկարբիտները կորցնում են իրենց վոտքերի տակի հողը և պարտութուն են կրում. կարվածատերերի մեծամասնությունը նորից դառնում է ճորտության կողմնակից: Նիկոլայ 1-ինի ճորտատիրական քաղաքականությունը գտնում է իր բացատրությունը Մ. Ն. Պոկրովսկու կողմից վոչ այլ ինչի մեջ, քան միայն «հացի ցածր գներում: «Նիկոլայի թագավորության սոցիալական պատմությունն անկարելի չէ հասկանալ յիժե մենք աչքից թուցենք այդ պրոգրայիկ բայց իր հետեանքներով արտակարգ կարևոր փաստը. 19-րդ դարի 20-ական և 30-ական թվականները հացի բացառիկ ցածր գների շրջան էին կազմում»¹⁾: Յեվ հետո. «Հացի ցածր գները ճորտատիրական իրավունքի ավելի լավ պատվարն էին, քան իշխանություն ունեցողների ամենատեսակ «ճորտատիրական փափագները»²⁾:

19-րդ դարի 40-ական թվականներին գրությունն արժատապես փոխվեց: Բեկումը հացի գների մեջ սկսվեց նախ Արևմտյան Յեվրոպայում և ապա նաև Ռուսաստանում: «40-ական թվականներից հացի գներն ավելի և ավելի յեն բարձրանում, ավելի և ավելի արագ է աճում ռուսական հացի արտահանությունը: Յեվ շուտով նույնիսկ գների վոչ մեծ անկումն անկարող է լինում կանգնեցնելու այդ: Հենց հացի գների եվոլյուցիայի մեջն է գտնվում պատասխանը, թե ինչու գյուղացիական ռեֆորմը մեղանում հետ մնաց 30 տարով—Նիկոլայ Պավլովիչի ամբողջ թագավորության ընթացքում, 20-ական թվականներից մինչև 50-ական թվականները: Հացի գների ցածրության դեպքում արտասահման տանելու ծախսերը չէին արդարանում, և քանի ռուսական հացը մուտք չունեի համաշխարհային շուկայում կարվածատիրական տնտեսությունն առիթ չունեի լայնացնելու հացի արտադրությունը վորոչ սահմաններից դեմը... Պատկերը խստորեն փոխվում է, հենց վոր ճգնաժամն սկսում է անցնել: Բացարձակապես ձեռնտու յեր ուժեղացնել արտադրությունը մինչև

¹⁾ Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսաց պատմությունը հնագույն ժամանակներից», հատ. 4-րդ, էջ 15—16, 1934 թ.

²⁾ Նույն տեղը, էջ 17.

վերջին հնարավոր սահմանները»¹⁾: կարվածատիրական գյուղատնտեսական արտադրություն լայնացումը «մինչև վերջին հնարավոր սահմանները» հասկացվում էր Մ. Ն. Պոկրովսկու կարծիքով, կոռային աշխատանքը վարձու աշխատանքի փոխարինումով: կարվածատերը նորից դարձավ գյուղացիների ազատագրման կողմնակից: «Հացի գների արագ աճումը,—դրա հետ միաժամանակ նաև ռուսական հացի արտահանություն արագ աճումը 50—ական թվականներին,—մի կատարելապես անհրաժեշտ նախապարագա յեր փետրվարի 19-ի ռեֆորմի համար»²⁾:

Ահա ճորտատիրական տնտեսություն վերջին փուլերի պատմությունն սխեման, վոր տվել է մեզ Մ. Ն. Պոկրովսկին: Նրա մեկնությունը ամբողջ հարցը հանգում է հացի գներին և միմիայն այդ գներին: Այդ հակամարտության, հակադիտական սխեմային, վորը սակայն լայն ծավալումն է ստացել մեր պատմական գրականության մեջ, մենք կփորձենք հակադրել ճորտատիրական տնտեսության քայքայման վերլուծությունն իր իսկական զարգացման մեջ:

0297
41

3.

Ճորտատիրությունը լիավարտ սխեման է այն հասարակական հարաբերությունների, վորոնք հիմնված են արտադրության ֆեոդալական-ճորտատիրական յեղանակի վրա: Վ. Ի. Լենինն արտադրության ֆեոդալական-ճորտատիրական յեղանակի եյությունը բնորոշում է հետևյալ չորս հատկանիշներով. 1) բնական տնտեսության տիրապետություն, 2) արտադրողին արտադրության միջոցներ տալը նրա ապրուստի համար, 3) Տնտեսության այսպիսի սխեմայի պայմանը գյուղացու անձնական կախումն է կարվածատիրոջից («արտատրն տեսական-հարկադրանք») և 4) կարիքից ճնշված և անձնական կախումից նվաստացած գյուղացու մանր տնտեսությունը, վորպես արտադրության ավյալ յեղանակի հիմնական բազա և այս-

¹⁾ Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսական կուլտուրայի պատմության ուրվագծեր», մասն 1, էջ 136—137.

²⁾ Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսաց պատմությունը հնագույն ժամանակներից», հատ. 4-րդ, էջ 17, 1934 թ.



տեղից բղխող տեխնիկայի հնամուտություն և անշարժություն¹⁾։

Ճորտատիրութեանը փոխարինելու դալիս է կապիտալիզմը, վորը ճորտատիրութեան կատարյալ հակադրութեանն է հանդիսանում։ Հիրավի, կապիտալիզմի համար բնորոշ են. 1) ապրանքային տնտեսութեան տիրապետություն, 2) արտադրողի անջատումն արտադրութեան միջոցներից, նրա եքսպրոպրիացիան, 3) անմիջական արտադրողի անձնական ազատություն, վորը հանդես է գալիս շուկայում վորպես ապրանքատեր, իրավական տեսակետից վարձողին հավասար («տնտեսական հարկազրանք») և 4) մեքենայական խոշոր արտադրություն և տեխնիկական արագ պրոգրես, վորը հետևանք է ամեն մի ձեռնարկատիրոջ հարաբերական հավելյալ աժեքը ստանալու ձգտմանը։

Հարց է ծագում, ինչպես կարող էր ճորտատիրութեանից առաջանալ՝ տրամագծորեն նրան հակադիր հասարակական հարաբերությունները սխտեմ և ինչպիսի ուղիներով է ընթացել ճորտատիրութեան քայքայման և կազմալուծման պրոցեսը։ Այդ հարցի լուծումը տալու համար կատարած Պ. Սարուվեյի, Ա. Բոգդանովի, Ն. Ռոժկովի, Մ. Ն. Պոկրովսկու և Պ. Ի. Լյաշչինսկոյի փորձերը չեն համապատասխանում գիտություն պահանջներին։ Այս հեղինակները յեխում էյին ճորտատիրութեան բուն էություն սխալ, հակադրատական ըմբռնումից և նրա անկման պատճառները փնտրում էյին վոչ թե հենց ճորտատիրութեան մեջ, այլ նրանից դուրս, արտաքին գործոնների ազդեցություն մեջ, ինչպես, հացի համաշխարհային գնների մեջ (Մ. Ն. Պոկրովսկիյ), պետություն պահանջների մեջ (Պ. Սարուվեյ և Գ. Վ. Պլեխանով) և այլն։ Հենց այդ հեղինակները մոտեցումն ուսումնասիրվող պրոբլեմին մեթոդորդիորեն սխալ է, խորապես հակադրատական, ուստի չեր կարող չհասցնել նրանց կոպիտ սխալների և պատմական գարգացման կատարելապես խեղաթյուրված մեկնաբանություն։

Մարքսիստը պարտավոր է ավյալ յուրաքանչյուր հասարակական-տնտեսական ֆորմացիայի անկման պատճառը վորոնել ամենից առաջ հենց այդ (ֆորմացիայի) մեջ, նրան յուրահատուկ ներքին հակասությունների մեջ։ Ուսումնասիրվող արտադրու-

1) Լենին, Յերկեր, հատ. 3-րդ, էջ 140—141, նաև հատ. 12-րդ, էջ 226—227.

թեան յեղանակն անհրաժեշտ է քննություն առնել իր խակահան բովանդակություն մեջ, վորպես հակադրությունների միասություն և միայն այս ճանապարհով կարելի յե գիտականորեն սահմանել նրա կործանման և նոր արտադրական հարաբերություններին անցնելու պատճառը, հարաբերությունների, վորոնք առաջանում են նախորդող հարաբերությունների բացասումից։ Կ. Մարքսը «Կապիտալի» 1-ին հատորի առաջաբանում գրել է, վոր դիալեկտիկան «իրականություն պողիտիվ ըմբռնման մեջ... միաժամանակ մտցնում է նրա բացասման, նրա անհրաժեշտ կործանման ըմբռնումն էլ, ամեն մի իրականացած ձև նա քննություն առնում շարժման մեջ, ուրեմն, նաև նրա անցողիկ կողմով»¹⁾... Ճորտատիրությունն ուսումնասիրելիս հարկավոր է սահմանել ճորտատիրությունը հատուկ հիմնական հակասությունը, գտնել հենց ճորտատիրություն ներսում նրա բացասումը։

Ճորտատիրություն բնահատուկ հատկանիշներից մեկն է անմիջական արտադրողին արտադրություն միջոցներ տալը, նրա ապրուպրիացիան։ Գյուղացուն հող և արտադրություն միջոցներ տալու վրա յե հաստատված ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների ամբողջ սխտեմը։ Բայց կալվածատերը գյուղացուն հող ու «սեփական» տնտեսություն ձեռք բերելու հնարավորություն էր տալիս նրան շահագործելու նպատակով։ «Գյուղացիների «սեփական» տնտեսությունն իր հողաբաժնի վրա կալվածատիրական տնտեսություն պայմանն էր, նպատակ ուներ վոչ թե «ապահովել» գյուղացուն կյանքի միջոցներով, այլ կալվածատիրոջը—բանվոր ձեռքերով»²⁾։ Մենք կարծում ենք, վոր այդ յերկու սկզբունքների առկայություն—գյուղացուն արտադրություն միջոցներ տալու և կալվածատիրոջ կողմից նրան շահագործելու—մեջ է կայանում ճորտատիրական հասարակություն ներքին հիմնական հակասությունը, վորովհետև այդ յերկու սկզբունքները փոխազարձաբար բացասում են միմյանց։ Հիրավի, կալվածատերը բաժին է հանում գյուղացուն հող և արտադրություն միջոցներ, վորպիսով նրան շահագործի։ Բայց այդ

1) Կ. Մարքս, «Կապիտալ», հատ. 1, յերկրորդ հրատարակություն առաջաբան, էջ 23.
2) Լենին, Յերկեր, հատ. 3-րդ, էջ 140.

ճորտատիրական շահագործումն ամփոփում է իր մեջ գյուղացու «սեփական» տնտեսութեան քայքայման տենդենց, վորը ճորտատիրական հասարակութեան տնտեսական հիմքն է հանդիսանում:

Ճորտատիրութեան քայքայման պատմական պայմանները հանգել են հետևյալին:

Ճորտատիրական տնտեսութեան իր ամբողջ ներքին կազմով յեղել է բնական տնտեսութուն: Բայց իր տնտեսութունից վորքան կարելի չէ մեծ քանակութեամբ հավելյալ արտադրանք հանելու ձգտումն անդուստլ կերպով քարշումստիպում էր ճորտատեր-կալվածատերը սահմանելու շուկայի հետ ավելի և ավելի սերտ կապեր, վորովհետև «առևտուրը նպաստում է փոխանակութեան համար սահմանված ավելցուկային արտադրութեան ստեղծմանը, վորպեսզի շատացնի սպառումը կամ արտադրողներին (վորի տակ այստեղ պետք է հասկանալ արտադրութունների սեփականատերերին) հարստութունները... Արտադրութունը նա հետզհետե ավելի և ավելի չէ յենթարկելու փոխանակային արժեքին, վորովհետև հաճույքը և սպառումը նա ավելի մեծ կախման մեջ է դնում վաճառքի, քան արտադրութունների անմիջական սպառումից»¹⁾: Բայց աստիճանաբար մոտեցնելով իր տնտեսութունն ապրանքային արտադրութեան ուղուն, ճորտատեր-կալվածատերն ընդհարվում է յերկու հակասութեան. նախ՝ իր վողջ ներքին կազմակերպութեամբ ճորտատիրական տնտեսութունը բացարձակապես հարմարեցված չէր շուկայի համար աշխատելու²⁾, յերկրորդ՝ հացի արտադրութունը կալվածատիրոջ կողմից՝ վաճառելու համար ուժեղացնում էր գյուղացիութեան շահագործումը և անխուսափելիորեն տանում էր դեպի խախտում և քայքայում գյուղացիական տնտեսութեան, վորը ճորտատիրական կարգի հիմքն էր կազմում³⁾: Ճորտատիրա-

կան տնտեսութունը մտնում է ծանր և յերկարատև ճգնաժամի շրջանը: Սկսում է նրա նեխման պրոցեսը, վորին ուղեկցում է դասակարգային հակասութունների խիստ սրում: Գյուղացիութեան շարժումը ճորտատեր-կալվածատերերի դեմ հասնում է այնպիսի ուժի, վոր ճորտատիրական կարգի հետագա գոյութունը դառնում է անհնարին: Ճորտատիրութունն արագ քայլերով գնում է դեպի իր անկումը:

Սակայն փորձենք ցույց տալ մեր առաջ քաշած դրույթները կոնկրետ պատմութեան փաստերով:

4.

18-րդ դարի յերկրորդ կեսին Ռուսաստանի տնտեսական կյանքի մեջ տեղի ունեցան նշանակալից փոփոխութուններ: Ուժեղացան Ռուսաստանի տնտեսական կապերն Արևմտյան Յեվրոպայի հետ: Բավականաչափ արագութեամբ աճեց արդյունաբերութունը, վորն ավելի և ավելի մեծ չափով անջատվում էր գյուղատնտեսութունից: Վերջնականապես ձևակերպվեց կենսարոնական-արդյունաբերական և կենտրոնական հողագործական մարդերի մեջ աշխատանքի բաժանումը, վորը նշվում էր դեռևս 16—17-րդ դարերում: Բանակը, վոր յերկրում ապրանքների հիմնական սպառողներից մեկն էր, 18-րդ դարի վերջին հասել էր 400,000 հոգու: Աճել է յին նաև ողու սպառումը և դրա հետ կապված ողեգործութունը: Այդ ամենը ծառայում էր շուկաների զարգացմանը՝ գյուղատնտեսական արտադրութունների համար: 19-րդ դարի առաջին կեսի ընթացքում գյուղատնտեսական շուկան ավելի ևս արագորեն զարգացավ և ճորտատիրական կալվածատիրական տնտեսութունն սկսեց լայն մասշտաբով հաց արտադրել վաճառելու համար:

Ճորտատիրական ժամանակաշրջանի վերջերին (19-րդ դարի 40—50-ական թվականներին) հացի ներքին շրջանառութունները հասնում են շատ նշանավոր չափերի: Այդ չափերի մասին կարելի չէ դադափար կազմել, որինակ, նրանից, վոր 40-ական թվականների կեսին ներքին գործերի մենխատրութեան տվյալների համաձայն միմիայն Մոսկվա ցամաքային ճանապարհով ամեն տա-

1) Կ. Մարքս, «Կապիտալ», հատ. 3-րդ, գլ. 20.

2) «Կալվածատերերի կողմից հացի արտադրութունը վաճառքի համար, վոր առանձնապես զարգացել էր ճորտատիրական իրավունքի գոյութեան վերջին ժամանակում, արդեն հին ուժի մի անկման նախագուշակն էր» (Լենին, Յերկեր, հատ. 3-րդ, էջ 140):

3) «Բայց անհ ներս է խուժում ապրանքային տնտեսութունը: Կալվածատերն սկսում է արտադրել հացը վաճառելու, այլ վոչ թե իր համար: Դա առաջացնում է գյուղացիների աշխատանքի շահագործման ուժեղացում—այնուհետև հողաբաժինների սխտեմի դժվարութունը, վորովհետև կալվածատիրոջ համար այլևս ձեռնառու չէ գյուղացիների աճող սերնդին տալ նոր հողաբաժիններ», (Լենին, յերկեր, հատ. 1, էջ 350):

րի բերվում եր 9 միլիոն փթից վոչ պակաս հաց¹⁾), 50-ական թվականները վերջերին ջրային ներքին ճանապարհներով յուրաքանչյուր տարի փոխադրում էին մոտավորապես 115 միլիոն փութ հաց²⁾), պաշտոնական տվյալների համաձայն, 40-ական թվականները վերջերս քանակի համար ամեն ամսի պետք եր ավելի քան 30 միլիոն փութ հաց³⁾ և այլն: Մինչև սեփորմները վիճակագրության վոդրմելի դրուժյունը զրկում և ուսումնասիրողներին վաճառքի համար արտադրած հացի քիչ թե շատ ճշգրիտ թվեր սահմանելու հնարավորությունից: Ռուսաստանի հացային բյուջեն վորոշելիս ժամանակակիցները սովորաբար հաշվում էին բնակչության գնովի հացի կարիք ունեցող զանազան կատեգորիաները և ապա բազմապատկում էին ստացված թվերը հացի սպառման նորմայի վրա: Թվերը վերցնում էին «հաշվապետով», այդ պատճառով ել տարբեր հեղինակներ տալիս էին իրարից բավական տարբեր թվեր: Որինակ, ըստ Արսենյեվի⁴⁾, գեուս 19-րդ դարի յերկրորդ տասնամյակին ողեգործությունը կրանում եր 50 միլիոն փթից վոչ պակաս հաց, ըստ Պրոտոպոպովի⁵⁾, 40-ական թվականների սկզբին՝ 80—90 միլիոն փութ, ըստ Տենգորբսկու⁶⁾, 50-ական թվականներին՝ 40—45 միլիոն փութ և այլն: Վոչ պակաս կարծիքներ կային նաև շուկա մշտնոդ ապրանքային հացի ընդհանուր քանակը վորոշելու մեջ: Հացի ներքին շուկայի տարողությունը 40-ական թվականներին վորոշելիս մինչև սեփորմային վիճակագիրներն ամենից հաճախ կրկնել են 40 միլիոն չեովերտ թիվը, այսինքն ավելի քան 300 միլիոն փութ: Այս թիվն արդեն ցույց և տալիս գյուղատնտեսության բավականին բարձր ապրանքայնությունը: Լոսիցկին, վերցնելով հիշած թվերից ամենափոքրը, գրել և. «Հացի առևտրի

1) Պ. Ի. Լյաշենկո, «Ռուսաստանի ագրարային եվոլյուցիայի ուրվագծեր», էջ 127, 4-րդ հրատ., 1925 թ.:
 2) Ա. Լոսիցկի, «Տնտեսական հարաբերությունները ճորտատիրական իրավունքի անկման ժամանակ», էջ 195, «Образование», № 11, 1906 թ.
 3) Պ. Ի. Լյաշենկո, «Ռուսաստանի ագրարային եվոլյուցիայի ուրվագծեր», էջ 120.
 4) Կ. Արսենյև, «Ռուսական պետության վիճակագրության ուրվագիծը», մասն 1, էջ 143.
 5) Դ. Ս. Պրոտոպոպով, «Հացի առևտրի մասին Ռուսաստանում», մասն 5-րդ, էջ 85, 1842 թ. «Журнал министерства государственных имуществ»
 6) Պ. Տենգորբսկի, «Ռուսաստանի արտադրող ուժերի մասին», մասն 1, էջ 85, 1855 թ.

հաշվի առնվող հանրագումարն ազատագրման շրջանում հասնում եր մինչև 200 միլիոն փթի՝ մի հսկայական թիվ, վորի ամբողջ մեծությունը մենք կհասկանանք, յեթե հիշենք, վոր 1900 թվին կրկնապատկված բնակչության զիմաց գլխավոր հացահատիկների բոլոր ներքին առևտուրը հասնում եր 750 միլիոն փթի, վորը 60-ական թվականների բնակչության վերաբերմամբ կլիներ 380 միլիոն փութ¹⁾:

19-րդ դարի առաջին կիսին բավականին արագությունը զարգացավ նաև հացի արտահանումը: Մինչև 19-րդ դարի սկիզբը նա Ռուսաստանի ժողովրդական անտեսություն համար ընտրվին անշան դեր և խաղացել: Նույնիսկ 18-րդ դարի 90-ական թվականներին, այսինքն արդեն Սև ծովի ափերը նվաճելուց հետո, Ռուսաստանից ամեն տարի արտահանում էին միմիայն մոտավորապես 3 միլիոն փութ հացահատիկ: 19-րդ դարի առաջին իսկ տարիներում հացի միջազգային շուկայի բարեհաջող կոնյունկտուրայի ազդեցության տակ և Նովոռոսիյսկի յերկրի յուրացման հետևանքով հացի արտահանության քանակը շատ նշանավոր չափով բարձրանում և: 19-րդ դարի առաջին կիսի ընթացքում արտահանվող հացի քանակը չափազանց անկայուն եր ապրանքային հացի քանակության համեմատությամբ, վորը տարվում եր ներքին շուկան: Ուժեղ ազդեցություն են ունեցել արտահանության ծավալի վրա միջազգային քաղաքական անցքերը (պատերազմները, ցամաքային բլոկադան), հաց ներմուծող պետությունների մաքսային քաղաքականությունը («հացի որենքները» Անգլիայում), հաց արտահանող յերկրների մրցությունը իրար հետ, բերքի չափը Ռուսաստանում և այլն:

ՀԱՅԻ ԱՐՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՅԵԼ Ե ՇԵՏՎՅԱԼ ԿԵՐՊՈՎ.²⁾

ՀԱԳԱՍՏԱԿՆԵՐ	Չորս գլխավոր հացահատիկների տարեկան միջին արտահանությունը (հազար փթերով)	Հնգամյակներ	Չորս գլխավոր հացահատիկների տարեկան միջին արտահանությունը (հազար փթերով)
1801—1805	19,873	1831—1835	18,469
1806—1810	5,120	1836—1840	29,831
1811—1815	9,089	1841—1845	27,205
1816—1820	29,655	1846—1850	51,211
1821—1825	10,071	1851—1855	45,396
1826—1830	23,950	1856—1860	69,254

1) Ա. Լոսիցկի, «Տնտեսական հարաբերությունները ճորտատիրական իրավունքի անկման ժամանակ», էջ 196, «Образование», № 11, 1906 թ.
 2) Կուլիշեր, «Ռուսական առևտրի պատմության ուրվագծեր», էջ 275, Պետրոգ. 1933 թ.

Մ. Ն. Պոկրովսկին հացի արտահանութիւնը համարում և վճռող գործոն, վորը վորոշում էր ճորտատիրական տնտեսութեան վիճակը Ռուսաստանում: Նրա կարծիքով, Արևմտյան Յեկրոպայի հացի գներն մակարդակից և արտահանութեան քանակիցն էլին կախված հացի ներքին գները և գյուղատնտեսութեան կոնյունկտուրան Ռուսաստանում: Մենք ամենևին չենք ժխտում հացի արտահանութեան մեծ նշանակութիւնը Ռուսաստանի գյուղատնտեսութեան համար այդ շրջանում, սակայն հացի արտահանութեանն այնպիսի գեր հատկացնել, ինչպիսին նրան հատկացնում է Մ. Ն. Պոկրովսկին, ամենակողմից սխալ է:

Արտահանութեան գերի հարցի լուծմանը մենք կմտտենանք սկզբում քանակական կողմից: Ի՞նչպիսի քանակական հարաբերութիւն ունեն արտահանութիւնը Ռուսաստանի հացի բյուջէի մեջ: Նախառեֆորմյան վիճակագրութեան դրութիւնը ավյալ դեպքում ևս զրկում է այդ հարցին բոլորովին ճշգրիտ պատասխան տալու հնարավորութիւնից: Նախառեֆորմյան վիճակագիրներն ընթացք տարբեր թվերից մենք կվերցնենք միայն նրանք, վորոնք ցույց են տալիս հացի արտահանութեան մաքսիմալ հարաբերական մեծութիւնը: Արտահանութիւնը կազմում էր հացի ընդհանուր բերքի 1—2⁰/₀, իսկ ապրանքայինի՝ 4—10⁰/₀, ըստ վորում վերջին չափին հասնում էր միայն մեր վերցրած շրջանի վերջերին և այն էլ միմիայն լավագուշտ բերքի տարիներում (19-րդ դարի 50-ական թվականներին): Այսպիսով արտաքին շուկան կրնում էր ամենաշատը՝ մի տասնորդական մասն այն հացի, վորը գնում էր ներքին շուկան, իսկ ընդհանուր բերքի համեմատութեամբ արտահանութեան չափը բոլորովին չնչին էր:

Բայց սովորային այդ հարաբերութիւններն ինքնին դեռևս շատ քիչ բան են ասում: Թերևս ապրանքային հացի 4—10⁰/₀-ը, վոր հատկացված էլին արտահանութեան համար, հենց այն հացային ավելցուկները, այն «մնացորդներն» էլին, վորոնք ճնշում էլին գործ գնում ներքին շուկայի վրա և ստեղծում էլին իջեցրած կոնյունկտուրա: Դա ամենալուրջ արգումենտն է, վորը կարելի չէ բերել ի պաշտպանութիւն հացի արտահանութեանը վորոշիչ նշանակութիւն ավող տեսակետի: Այդ արգումենտն արժանի չէ, վոր նրա վրա ալիքի մանրամասնորեն կասկ տեսնենք:

Հացի արտահանութեան հիմնական մասը 19-րդ դարի առաջին կիսին յեղել է ցորենը: 1816-ից մինչև 1855 թվականը, ութ հնգամյակներից վեցի ընթացքում արտահանվող հացի մեջ ցորենը կազմել է 60—80⁰/₀ և միայն յերկու հնգամյակի ընթացքում իջել է 60⁰/₀-ից քիչ պակաս: Յորենից հետո յերկրորդ տեղը բռնել է հաճարը, վորի բաժինը հացի արտահանութեան մեջ տատանվել է տարբեր հնգամյակներում 7-ից մինչև 30⁰/₀, կազմելով միջին հաշվով ամբողջ ժամանակաշրջանի համար 20⁰/₄/₀:

Հացի խոշոր մասն արտահանվում էր Սև և Բալթիկ ծովերի նավահանգիստներով, ըստ վորում Սև ծովի նավահանգիստները համարյա մոնոպոլիստներ էլին ցորենի արտահանման մեջ (1824—1847 թ. թ. արտահանած 44 միլիոն չեովերս ցորենից Սև ծովով անցել է 39 միլիոնը), մինչդեռ հաճարը նշանավոր չափով արտահանվում էր Բալթիկ ծովի վրայով¹⁾: Սպիտակ ծովի և ցամաքային սահմանների մասնակցութիւնը հացի արտահանութեան մեջ բոլորովին աննշան էր: Վեր գյուղատնտեսական շրջաններն էլին մեր վերցրած շրջանում հաց արտադրում արտահանութեան համար: Դեպի Բալթիկ ծովի ափերը հաց գնում էր Մերձվոլգյան յերկրից (Մարինսկի և Վոլշնեվոլոցկի շրանցքների սիստեմով), Արևմտյան Դվինայի ավազանից և Ոստգեյան յերկրից: Բայց Մերձվոլգյան հացի մի նշանավոր մասը մնում էր ճանապարհին՝ Բարձրվոլգյան սպառող նահանգներում (Ն.Նովգորոդի նահանգի հյուսիսում, Յարոսլավի, Կոստրոմայի և այլ նահանգներում), ապա հենց Պետրբուրգում, վորն այդ ժամանակ արդեն խոշորագուշտ բազմաբնակ կենտրոն էր և միայն Մերձվոլգյան հացի համեմատաբար շատ վորք մասը և այն էլ վոր սիստեմատիկ կերպով, արտահանվում էր արտասահման: Մի քիչ ավելի հաց, գլխավորապես հաճար, արտահանվում էր Ոստգեյան յերկրից: Վերջապես, արտահանութեան համար հաճար էր ստացվում նաև Լիտվա-Բելոռուսական նահանգներից, վորոնք սահմանակից էլին Արևմտյան Դվինային, բայց շատ քիչ քանակութեամբ, վորովհետև Լիտվա-Բելոռուսական յերկիրը և իր հողի վորակով, և՛ գերբնակվածութեամբ ամենելին չէր կարող հացի շտեմարան լինել: Այսպիսով արտահա-

¹⁾ Բալթիկ ծովի նավահանգիստներով արտահանվում էր հաճարի քանակութեան մոտ 40⁰/₀-ը և ցորենի մոտ 5⁰/₀-ը:

նությունը Բալթիկ ծովով, վոր բավականին աննշան եր թե բացարձակապես, և թե համեմատաբար, փոշխանում եր մի քանի շրջանների մեջ, վորոնք անտեսապես շատ թույլ կապ ունեյին իրար հետ: Հացի արտահանման անմիջական ազդեցութեան մասին գյուղատնտեսական կոնյունկտուրայի վրա խոսք կարող ե լինել միայն Ոստղեյան յերկրի նկատմամբ, այսինքն, այնպիսի մի շրջանի նկատմամբ, վորտեղ գյուղացիական սեփորմն արդեն կատարված եր և վորը ներքին նահանգներից առանձնացած եր բոլոր կողմերով՝ և՛ անտեսապես, և՛ սոցիալականապես, և՛ քաղաքականապես:

Իսուհանք այժմ Սեւծովյան արտահանութեանը: Սև և Ազովյան ծովերով եր անցնում արտահանվող հացի գլխավոր մասսան, մեծ մասամբ ցորենը: Այդ հացը կրում եյին Սև ծովի նավահանգիստները մեծ մասամբ ցամաքային ճանապարհով, ամառային ուղիներով, յեղներով, վորովհետև սայլակային արանսպորտի այդ ձևը բավական հեծան եր, թույլ եր տալիս սայլապաններին ճանապարհին կերակրել յեղներին արածացեւելով: Ավելի քիչ հաց եր մտնում նավահանգիստները գետերի միջոցով՝ ծանծաղ Դոնով և սահանքավոր Դնեպրով:

Վեր գյուղատնտեսական շրջաններն եյին հաց մատակարարում սև ծովյան արտահանման համար: Մի շարք ուղղակի և կողմնակի ավյայներ բոլորովին վորոշակի վկայում են, վոր այդ տեսակ շրջան յեղել և միայն Նովորոսիան: Նավահանգիստներին հասցնելու պայմանները յերկաթուղային արանսպորտի բացակայութեան հետևանքով այնպես եյին, վոր նույնիսկ Նովորոսիայի սահմանակից շրջանների հարավային գավառներից (Հյուսիսային Ուկրաինան և Կենտրոնական-սևհողայն մարզը) հացը ընկնում եր Սև ծովի ափերը վորպես բացառութեան: Դեռ ավելին, նույնիսկ Նովորոսիայի հյուսիսային մասի հացը դժվարութեամբ եր գնմանում արանսպորտի ծախսերին¹⁾:

Հացի Սեւծովյան արտահանութեան անմիջապես ազդել և հացի գների առաջացման և գյուղատնտեսական կոնյունկտուրայի վրա միմիայն Նովորոսիայում և այն ել այն չափով, վոր Նովորոսիան անցել և վոչխարաբուծութեանից հացահատիկային

¹⁾ Ա. Ավիսենտե. «Գյուղատնտեսական արդյունաբերութեան ուրվագիծը Նովորոսիայի յերկրի, Յեկատերինոսլավի նահանգում»: Մոսկվա, 1850 թ

անտեսութեան: Նովորոսիայի վիճակը և հացի արտահանման վիճակը Ռուսաստանում, հիրավի, սերտորեն կապված են յեղել իրար հետ: Մի կողմից հացի արտահանութեանը կարող եր դարգանալ միայն Նովորոսիայի գաղութացման և կուլտուրայի անձայր տարիտատանների հերկման հետ միասին, իսկ մյուս կողմից Նովորոսիան կարող եր անտեսապես աճել միայն այն պայմանով, յեթև Արևմտյան Յեվրոպան պահանջ ունեւր ուստական հացի և այդ հացի համար վճարում եր ընդունելի գին:

Այսպիսով արտահանութեան վրա աշխատում եյին և նրա հետ անմիջական կապ ունեյին Յեվրոպական Ռուսաստանի սակավաթիվ շրջանները—Ոստղեյան յերկիրը և Նովորոսիան: Դրանք այն շրջաններն եյին, վորտեղ ճորտատիրական բնակչութեանն ամենից քիչ սովոր ունեւր և վորտեղ զգալի վերադանցութեամբ կար ազատ և կիսով ազատ աշխատանք: Հողագործական ներքին նահանգները, վորտեղ ճորտատիրական բնակչութեան սովորը շատ մեծ եր և վորտեղ անտեսութեան գերակշռող ձևը կոռային սխտեմն եր, կամ բոլորովին չեյին արտադրում հաց արտահանութեան համար, կամ արտադրում եյին չնչին քանակութեամբ: Հացի արտահանութեան համար համարյա վոչինչ չեւր արտադրում Կենտրոնական-Սևհողային մարզը, այդ «կոռի թագավորութեանը», վորտեղ ամենից սուր կերպով եյին յերևան գալիս ճորտատիրական անտեսութեան ներքին հակասութեանները:

Սակայն չե կարելի գերոյի հավասար համարել հացի արտահանութեան և նավահանգիստներում հացի գների առաջացման ազդեցութեանը գների առաջացման պրոցեսի վրա այն շրջաններում, վորոնք արտահանելու համար հաց չեյին արտադրում: Անվիճելի յե, վոր յերկու հարևան շրջաններում, վորոնցից մեկը արտադրում եր հացն արտահանելու համար, իսկ մյուսը՝ ներքին գործածութեան համար, հացի գների շարժումը փոխադարձ կախման մեջ եր գտնվում: Հաց արտահանող գոտուն սահմանակից շրջանը, իր հերթին, ազդում եր իր հետևը գտնվող ներքին շրջանի գների գոյացման վրա և այլն: Այսպիսով այն նավահանգիստներից, վորտեղ հացի գներն անմիջապես կապված եյին հացի համաշխարհային գների հետ, յերկրի խորքն եր գնում գների գոյացման ալիքը, վորն անցնում եր արտահանութեան համար հաց արտադրող շրջանների սահմաններից: Այդ ալիքի ուժը հակա-

զարձ համեմատական եր նրա յերկարութեանը՝ վորքան հեռու յեր գտնվում ավյալ կետը նավահանգստից, այնքան ավելի թույլ եր զգացվում նրա մեջ նավահանգստի հացի գների ազդեցութեանը: Նավահանգիստներից յեկող ավիքի դեմ յերկրի խորքից գալիս եր հակառակ գներ զոյացնող ավիք, վորը կազմվում եր արտադրութեան քանակի, բերքի զրութեան և ներքին պահանջի հարաբերութեանները: Ընդհարվելով առաջին ավիքին, յերկրորդը հաղթում եր և չեզոքացնում եր նրան: Հացի նավահանգստային գների չեզոքացման սահմանը բավական յերեւուն եր. նա յերբեմն մոտենում եր նավահանգիստներին, յերբեմն հեռանում եր յերկրի խորքը, նայած յերկրորդ ավիքի ուժին: Անբերրի տարիներում ներքին գներ զոյացնող ավիքը համարյա ամբողջովին չեզոքացնում եր արտաքին ավիքը նույնիսկ նավահանգստային քաղաքներում: Որինակ, 1833 թվականի անբերրութեան հետեւանքով ցորենի վաճառման միջին գինը 1834 թվին բարձրացավ թղթադրամով մինչև 22 ո. 56 կ. մի չեզոքարտի համար՝ 1833 թվի 18 ո. 13 կոպեկի դիմաց (թղթադրամով), վորպեսզի հետեւյալ 1835 թվին նորից իջնե 16 ո. 98 կոպեկի թղթադրամով: 1840 թվի անբերրութեան հետեւանքով հաճարի գինը 1841 թվին բարձրացավ թղթադրամով մինչև 22 ո. 26 կ. չեզոքարտին, 1840 թվի 13 ո. 06 կոպեկի (թղթադրամով) դիմաց, վորպեսզի 1842 թվին նորից իջնի մինչև 12 ո. 33 կոպեկի թղթադրամով¹⁾: Միջակ բերք յեղած տարիներում գներ զոյացնող յերկու ազդեցութեանների չեզոքացման սահմանը մի քիչ քաշվում եր դեպի յերկրի խորքը, բայց արտահանութեան հաց արտադրող շրջանի սահմանից հեռու չեղ գնում:

Ներքին նահանգներում արտահանութեան ազդեցութեանը գների զոյացման պրոցեսի և գյուղատնտեսութեան կոնյունկտուրային տատանման վրա չափազանց աննշան ե յեղել: Ժամանակակիցները շատ լավ գիտակցել են այդ և շատ անգամ են հավաստել: Որինակ, պետական կալվածքների մինիստր կոմս Կիսելյովն իր «Ամենահպատակ տեղեկագրի» մեջ 1846 թվի համար գրել և. «1846 թվին յեղան և՛ պահանջներ, և՛ լավ գներ նավահանգիստներում, բայց զրանք քիչ ազդեցութեան ունեցան հացի

1) Տես աղյուսակը վեներվսկու հոդվածում, «Հացի գների մասին Ռուսաստանում», «Журнал министерства государственных имуществ» մասը, էջ 77, 15-րդ:

շահավետ վաճառելու վրա այն նահանգներում, վորոնք հեռու յեն գտնվում նավահանգիստներից, վորովհետև հսկայական տարածութեանները խանգարում եյին շուտով և եփան գնով հացը տեղ հասցնելուն¹⁾: Մեր տրամադրութեան տակ կան բավականաչափ ալ տեսակի ավյալներ—հացի գներ, վորոնք տարբերվում են ավելի մեծ որչեկտրվիզմով, քան ժամանակակիցների արած հայտարարութեանները: Բայց նույնիսկ հացի գների ամենամանրակրկիտ և խնամքով կատարած վերլուծումով դժվար ե սահմանել վորեւ որինաչափ պարալելիզմ այդ գների շարժման մեջ յերկրի ներսում և նավահանգիստներում: Բերնք մի քանի որինակներ:

Համեմատենք ցորենի գները շարժումը հարավային նավահանգիստներում և Ու. Ֆ. Կլեպացկու կալվածքում, վորը գտնվում եր Բելգորոզի գավառում, այսինքն Կենտրոնական-Սև հողային գոտու ամենահարավային մասում, համարյա Նովորոսիսայի սահմանի վրա²⁾:

ՏԱՐԻՆԵՐԸ	Մի չեզոքարտ ցորենի գինը հարավային նավահանգիստներում	Մի չեզոքարտ ցորենի գինը Ու. Ֆ. Կլեպացկու կալվածքում
1825	15 ո. 32 կ. թղթադրամով	8 ո. —
1826	11 » 24 »	6 ո. 50 կ.
1827	11 » 09 »	8 ո. 20 »
1828	13 » 52 »	9 ո. 50 »
1829	17 » 35 »	9 ո. —
1830	20 »	9 ո. —

Նավահանգստային գներն իջնելով 1825 թվից դեպի 1826 թիվը 26⁰/₁₀₀-ով, այնուհետև հայտարարում են բարձրանալու կայուն տենդենց: Բելգորոզի գներն այդ ժամանակ ընդհանուր առմամբ մնում են առաջվանը, նրանց աննշան տատանումները վոչ մի աչքի ընկնող կապ չունեն նավահանգստային գների հետ:

Անցնենք այժմ հաճարին—Կենտրոնական—Սևհողային գոտու կոռային կալվածքների հիմնական հացին:

1) Քաղում ենք Պ. Բ. Սարովեյի «Ճորտատիրական տնտեսութեանից», էջ 149.

2) Թվերը վերցրել ենք Կ. Վեսերվսկու հոդվածի աղյուսակներից:

Տարիները

Մի չեռվերա հաճարի գինը նավահանդիստներում
 Բերքատուությունը և մի չեռվերա հաճարի գինը Բուենիյի և Պալմայի կալվածքներում Տամբոլի նահանգի Ուսմանի գավ. Մի չեռվեր հաճարի գինն Ուոլվի նահանգի Բրյանսկի գավառում և Կալուգայի նահանգի Փիլզերին սկի գավառում

Տարիները	Բերքը	Գինը	Մի չեռվեր հաճարի գինն	Ուոլվի նահանգի Բրյանսկի գավառում և Կալուգայի նահանգի Փիլզերին սկի գավառում
1824	9 ս. 25 կ. թղթաղբ.	11 4 ս. 50 կ. թղթաղբ.	6 ս.	թղթաղբ.
1825	10 » 01 » »	9 4 » »	6 » 75 կ.	»
1826	12 » 07 » »	9 5 » »	7 »	»
1827	11 » 81 » »	12 3 » »	6 »	»
1828	10 » 48 » »	11 3 » »	5 » 50 կ.	»
1829	10 » 24 » »	11 3 » »	5 » 50 »	»
1830	10 » 22 » »	2 8 » »	10 » 50 »	»
1831	12 » 05 » »	12 5 » »	7 » 50 »	»
1832	12 » 71 » »	8 9 » »	9 » 25 »	»
1833	13 » 40 » »	9 10 » »	21 »	»
1834	13 » 86 » »	6 11 » »	18 » 50 »	»
1835	13 » 22 » »	5 6 » »	9 » 50 »	»

Աղյուսակների տվյալների համաձայն նավահանգստային գները մաքսիմալ կաշուն են: Նրանք ընդհանուր առմամբ հայտարարում են բարձրանալու հակումն, ըստ վորում տատանումների կորագիծը 1824—1826 թվականներին գնում է վեր, 1826 1830 թ.թ. վար, 1830—1831 թ. թ. նորից վեր է բարձրանում: Ներքին գներն անկաշուն են: Յեթե կարելի չէ նույնիսկ սահմանել մի վորեք որինաչափություն նրանց շարժման մեջ, այդ պետք է ամենից առաջ փնտռել գների և բերքի հարաբերության մեջ և վոր թե հացի գների շարժման մեջ համաշխարհային շուկայում:

Բոլորովին համոզիչ չէ Մ. Ն. Պոկրովսկու¹⁾ բերած աղյուսակը, վոր պետք է ապացույց հացի գների տատանման կախումը Տամբոլի նահանգում նրանց տատանումից Ողեսայում: Յենթադրենք, վոր գների թուլեքը դեպի վեր Տամբոլի նահանգում 1847 թվից մինչև 1848 թիվն իսկապես ծագել է 1846 թվից դեպի 1847 թիվն Ողեսայում տեղի ունեցած թուլեքից, ըստ չի վոր Տամբոլի նահանգում մենք ունենք նաև այլ վոր պակաս չափի թուլեքներ. որինակ, 1849 թվից դեպի 1850 թիվը, վորոնք վոր մի ակնհայտ կապ չեն ունեցել Ողեսայի գների շարժման հետ:

1) Մ. Ն. Պոկրովսկի, «Ռուսաց պատմությունը հնազույն ժամանակներից», հատ. 4-րդ էջ 44, 1934 թ.

Հացի շուկայի աճումը 18-րդ դարի յերկրորդ կիսին և 19-րդ դարի առաջին կիսին այնտեղը հասցրեց, վոր ճորատիրական կարվածատիրական տնտեսությունն սկսեց ավելի և ավելի շատ հաց արտադրել վաճառելու համար: Յեթե 18-րդ դարի վերջին կարվածատերերն անմիջապես շահագործում էին ճորատիրական իրավունքի վորտում գանված հողերի միայն 17,7⁰/₁₀₀ը¹⁾, ապա 19-րդ դարի կիսին այդ տեղում ամբողջ Յեվրոպական Ռուսաստանի համար բարձրանում է մինչև 43,8-ի, իսկ մի քանի շրջաններում անգամ շատ ավելի բարձր: Այսպես, կենտրոնական հողագործական շրջանում կարվածատերերն անմիջապես շահագործում էին 52,8⁰/₁₀₀, Մերձվորդայում 56,2⁰/₁₀₀, Չախափնյա Ուկրաինայում—61,2⁰/₁₀₀, իսկ Նովորոսսիայում՝ նույնիսկ 85,7⁰/₁₀₀²⁾:

Լայնացնելով իր հերկը, կարվածատերն ինտենսիվացնում էր գյուղացիական պարհակները: Մեր վերջրած շրջանի ընթացքում Ռուսաստանի ժողովրդական տնտեսության մեջ ապրանքային-դրամական հարաբերությունների ներթափանցման չափով գյուղացիական պարհակներն առհասարակ արագությամբ են աճում: Բայց հողատերքային սխտեմի դեպքում բուն տնտեսական կառուցվածքի ընթացքում պարհակների աճման առաջ դրված էին բավականին նեղ սահմաններ, իսկ կոռային սխտեմի դեպքում այդ սահմանները կարող էին բավականաչափ լայնանալ: Դրա համար էլ ճորատիրական շահագործումը կոռի մեջ հասնում է իր ամենարարձր աստիճանին:

Ճորտ գյուղացու աշխատանքային ուժի կենս ոտարացնելն այն մինիմումն էր, վորից ավելի ցած չէր իջնում ճորատիրական շահագործման նորման: Վարելահողի բաժանումը յերկու հավասար մասերի՝ կարվածատիրական և գյուղացիական ողտատիրման մեջ-կարվածատիրոջ «արդարության» և ճորատիրական աղնվության իդեալն էր: Ռյազանի աղնվականության պատգամավորական ժողովը, յերբ քննում էր մի կարվածատիրոջ գործ,

1) Վ. Ի. Սեմևսկի, «Գյուղացիները Յեկատիրինա 2-րդ-ի թագավորության ժամանակ», հատ. 2-րդ էջ 584—585.

2) Ն. Ոգանովսկի, «Ագրարային եվոլյուցիայի սրինաչափությունը», մասն 2-րդ, էջ 295.

վորի վրա գանգատ կար, ուղղակի հայտարարել ե. «Ռյազանի նահանգում ընդհանուր սովորութիւնն է, սրբազործված ժամանակի ընթացքում,—հող տալ գյուղացիներին կալվածատիրոջ հողի կիսի չափ¹⁾։ Վոյեյկովի կալվածքում (Ռյազանի նահանգի Պրոնսկի գավառ), վորտեղ Պովալիշինի կարծիքով սովորական նորմաների վոչ մի խախտում չի յեղել, յուրաքանչյուր ծուխ ստանալով իր ոգտագործման համար 6 գեսյատին հող, մշակում էր կալվածատիրոջ համար նույնչափ հող (յերեք որվա կոտ)։ ձմեռը յուրաքանչյուր ծուխ տալիս էր յերկու սայլ կալվածատիրոջ հացը Մոսկվա կրելու համար (300 վերստից ավելի), յերկու սայլ Ռյազան կրելու համար (մոտ 150 վերստ), $\frac{1}{5}$ սայլ Յեֆրեմովի գավառը տանելու համար (200 վերստ), բացի դրանից, սեղանապաշարի փոխարեն ամեն մի ծուխ վճարում էր 6 ո. 75 կ., իսկ յուրաքանչյուր «գեղջուկ կնոջից» գանձում էին յերկուական արջին կանեփի կտավ և մի-մի հատ փաթեթ մանվածք²⁾։ Նույն տեսակի պարհակներ են կատարում գյուղացիները իշխան Վոլկոնսկու կալվածքում (վորին Պովալիշինը համարում է որինակելի և «արդարագատ» տնտեսատեր այն տարբերութեամբ միայն, վոր նրա գյուղացիները սեղանապաշարը վճարում էին վոչ թե դրամով, այլ բնաբերքով մի ուրիշ «արդարագատ» կալվածատիրոջ՝ Սեմենովի կալվածքում գյուղացիական պարհակներն ավելի ևս ծանր էին։

Վորքան շատ էր արտադրում տվյալ կալվածատիրական տնտեսութեանը վաճառելու համար հաց, համեմատաբար նույնքան ավելի շատ կոռային աշխատանք էր պահանջում կալվածատերն իր գյուղացիներից։ Իշխան Կ.-երի Սարատովի անազին կալվածքում, վորի մասին գրում է Զարլոցկի-Դեսյատովսկին, կար 1953 ծուխ։ Ամեն մի ծուխ մշակում էր 21 գեսյատին հող, վորից 7-ը իր համար և 14-ը կալվածատիրոջ համար։ Բացի դրանից գյուղացիները կրում էին ջրագացը և այնտեղից Սարատով վաճառքի համար 200,000 փութ կալվածատիրոջը պատկանող ալյուր և սպասարկում էին նրա 30,000 վոչխարներին, ըստ վորում վոչխարներին խնամելը չափազանց ծանր պարհակ

¹⁾ Ա. Պովալիշին, «Ռյազանի կալվածատերերը և նրանց գյուղացիները», էջ 36.

²⁾ Նույն տեղը, էջ 33—34.

էր. Ներանց համար հարկավոր էր պատրաստել և կրել մինչև 400,000 փութ խոտ և մինչև 135,000 փութ հարդ։ Վոչխարանոցները, վորոնց թիվը հասնում էր 20-ի 12,000 քառակուսի սափենի վրա, ամեն որ ծածկվում են թարմ հարդով։ Դա կազմում է աղբի շերտ մի արջին հաստութեամբ—գարնանն այդ աղբը հարկավոր է դուրս բերել վոչխարանոցից¹⁾։

Բայց նույնիսկ այն, ինչ վոր գյուղացին մշակում էր իր հողամասի վրա, լիովին չէր պատկանում անձնապես նրան։ Իր հողաբաժնից ստացած յեկամուտով գյուղացին պարտավոր էր վոչ միայն վերարտադրել իր աշխատանքային ուժը, այդ խոսքի նեղ իմաստով, այլև արտադրութեան մնացած պայմաններն ինչպես իր, նույնպես և կալվածատիրական տնտեսութեան համար, այսինքն վերանորոգել գյուղատնտեսական անհրաժեշտ ինվեստարը, կերակրել մի քանի ձիեր, վորոնք հետո ոգտագործվել են կոտի վրա²⁾ և այլն։ Այնուհետև իր հացի մասը գյուղացին պարտավոր էր հանձնել հասարակական պահեստի խանութին անբերրիութեան դեպքերի համար, վերջապես, նա պետք է փող ձարեր, վոր վճարեր հասարակական դրամական տուրքերը և պետական հարկերը։ Դուրս գալով այդ ամենը, նրա ձեռքին մնում էր մերկ, համարյա զոռոզիական Existenz minimum-ը։ Այսպիսով կոռային սխտեմի ոգնութեամբ կալվածատերն արտադրողական ուժերի զարգացման տվյալ աստիճանի վրա հասել էր գյուղացիական աշխատանքի և գյուղացուն շահագործելու մաքսիմալ հնարավոր ինտենսիվացմանը։ Շահագործման նորման մոտեցել էր վոչ միայն իր հատարակական, այլև բնական սահմանին³⁾։

Հացի շուկան սպասարկելու վերաբերմամբ 19-րդ դարի կալվածատիրական տնտեսութեանն ունեւր զգալի մեծ առավելութեւններ գյուղացիական տնտեսութեան համեմատութեամբ։

¹⁾ Ա. Պ. Զարլոցկի-Դեսյատովսկի, «Կոմս Գ. Դ. Կիսելյով», հատ. 4-րդ, էջ 277—278.

²⁾ Աչքի անկացնելով գյուղացիական գերզատանների կայքագիրը, դարմանում են կոռային գյուղացու ձիաշատութեան վրա։ Որինակ, Կենտրոնական-հողագործական և Միջին Վոլգայի շրջաններում 6—7 ուտոդներից բաղկացած մի գյուղացիական գերզատանին միջին հաշվով ընկնում է յերեք ձի։ Սակայն այդ բաղմածիւթունն ամենեկին չի կարող գյուղացու ունեւրութեան ցուցանիշ ծառայել, վորովհետև ըստ էութեան գյուղացին պահում էր ձիերին իր հաշվով կալվածատիրական տնտեսութեան համար։

³⁾ Կ. Մարքս, «Կապիտալ», հատ. 3-րդ, էջ 326.

Մակայն նրա հիմնական առավելութունը վոչ ամենևին այն էր, վոր նա խոշոր էր, իսկ գյուղացիականը՝ մանր, ինչպես Պ. Ստրուվեն և կարծում, այլ այն, վոր նա ոգտվում էր կոռային աշխատանքից: Կոռի շնորհիվ կալվածատերը չգիտեր արտադրության ծախսեր, այդ խոսքի կապիտալիստական իմաստով, և կամ գիտեր միայն մասամբ, այս պատճառով էլ նա կարող էր ավելի մեծ հաջողությամբ, քան գյուղացին, վաճառել հացը գոյություն ունեցող գներով, ուշադրություն չդարձնելով այն հանդամանքին, վոր գները շատ հեռու յեն հացի մեջ մտցրած աշխատանքային ծախսերը փոխհատուցելուց: Կոռային սիստեմի հիմնական առանձնահատկությունն այն է, վոր նրանում համագոյակցում են միասնական կոմպլեքսի մեջ յերկու տնտեսություններ՝ կալվածատիրական և գյուղացիական, վորը հնարավորություն էր տալիս կալվածատիրոջը չվախենալ հացի ցածր գներից. կալվածատերն ուղղակի գյուղացիական տնտեսության վրա յեր գնում շուկայի գնի և արտադրության ուսուցանելու տարբերությունն այնպես, վոր հացի վաճառումից ստացած համարյա ամբողջ դրամը, նույնիսկ ամենացածր գների դեպքում, նրա համար զուտ «շահույթ» էր:

6.

Ճորտատիրական կալվածատիրական տնտեսությունը 19-րդ դարի առաջին կիսին, վոր անցել էր վաճառքի հանվող հացի արտադրության ուղին, գոյություն ուներ զարգացող կապիտալիզմի պայմաններում: Յուրաքանչյուր տասնամյակի հետ մեծանում էր ճորտատեր-կալվածատիրոջ փողի կարիքը, վորը նա կարող էր բավարարել միմիայն շուկա հանելով հացի ավելի և ավելի մեծ քանակություն: Վորպեսզի ավելացնի ճորտատիրական կալվածքի յեկամաբերությունը, նա իր տնտեսությունը պետք է շուտ տար տեպականորեն հնարավոր հետևյալ ուղիներից մեկով. 1) պահպանելով նախկին մակարդակի վրա աշխատանքի արտադրողականությունը և անհրաժեշտ արտադրանքի մասսան, ավելացնել հավելյալ արտադրանքի մասսան՝ աշխատանքի ընդհանուր մասսայի ավելացման հաշվին, 2) պահպանելով նախկին մակարդակի վրա անհրաժեշտ արտադրանքի մասսան և աշխա-

տանքի ընդհանուր մասսան, ավելացնել հավելյալ արտադրանքի մասսան՝ աշխատանքի արտադրողականության ավելացման հաշվին, 3) պահպանելով նախկին մակարդակի վրա աշխատանքի արտադրողականությունն ու ընդհանուր մասսան, ավելացնել հավելյալ արտադրանքի մասսան՝ անհրաժեշտ արտադրանքի մասսայի պակասեցման հաշվին: Այդ ուղիներից առաջինը նշանակում էր գյուղատնտեսության հքստենսիվ լայնացումը և հնարավոր էր ազատ չհերկված հողերի առկայության դեպքում, այսինքն գլխավորապես շատահող ծայրագավառներում (Անդրվոլգյան Յերկիր, Նովորոսիա): Յերրորդ ուղին գյուղատնտեսության մեջ տեխնիկական նոր բազա ստեղծելու և Արևմտյան Յեվրոպայի գյուղատնտեսական տեխնիկայի նվաճումը Սրբաբերական հերկի լայնացումը գյուղացիականի հաշվին, կալվածատիրական հերկի լայնացումը գյուղացիականի հաշվին, գյուղացիների կոռային պարհակի մեծացումը և այլն: Ճորտատիրական տնտեսությունը, ընտրելով այդ յերեք ուղիներից մեկը, շնորհիվ իր ներքին կազմի ստեղծում էր իր հավորեք մեկը, շնորհիվ իր ներքին կազմի ստեղծում էր իր հավորեք մեկը, շնորհիվ իր ներքին կազմի ստեղծում էր իր հավորեք մեկը, շնորհիվ իր ներքին կազմի ստեղծում էր իր հավորեք մեկը:

Նախ՝ կանգ առնենք ճորտատիրական գյուղատնտեսության մեջ տեխնիկական կատարելագործություններ մտցնելու պորբեմի վրա:

Տիպիկ կոռային տնտեսությունը հենվել է համարյա բացառապես գյուղացիական ինվենտարի վրա, այսինքն, հետևացողապես գյուղացիական տնտեսության մշակման տեխնիկայի և պես, գյուղացիական տնտեսության մշակման տեխնիկայի և ձեռքի վրա: Կալվածատերը սովորաբար ունեցել է շատ փոքր ձեռքի վրա կալվածատեր անասուններ և հաճախ բոլորովին չի փանակում կալվածատեր անասուններ: Հողը, նույնիսկ վոչ սևահողը, ունեցել սեփական բանող անասուն: Հողը, նույնիսկ վոչ սևահողը, կամ բոլորովին չէր պարարտացվում և կամ պարարտացվում էր անբավարար¹⁾: Յեթե ուշադրության առնենք, վոր բացի դրա-

1) Որինակ Չերնիգովի նահանգի Սուրբի գավառում, վորտեղ հողը բացառիկ կալվածատերերն էր ու ավազոտ, ամբողջ ազգը, վոր կուտակում էր կալվածատիրական տնտեսությունը, գործ էր անում սովորաբար կանիկի համար և միայն շատ քիչ կալվածատերեր թողնում էին չմի փոքր քանակ աղբ՝ հարուստ պարարտացման համար. իսկ հարուստ հողի խոշոր մասը նաև աղբ՝ հարուստ պարարտացման համար. «Գյուղատնտեսությունը բոլորովին չէր պարարտացվում (Գ. Յեխիմոնովսկի, «Գյուղատնտեսությունը Չերնիգովի նահանգի Սուրբի գավառում», «Журнал министерства государственных имуществ», մասն 15-րդ, բաժ. 2-րդ, էջ 15):

նից, վարը, փոցիւր և այլն կատարում եյին գյուղացիները չափազանց վատ, այն ժամանակ հասկանալի կլինի, թե ինչու բերքն այդպես ցած էր լինում: Գյուղացիական տնտեսութեան ցածը արտադրողականութեան հետեանքով կարվածատիրական հերկի լայնացման հնարավորութեանը չափազանց սահմանափակ էր: Ա. Պովալիշինի հաշիվով, վոր նա կատարել է բավական շատ նյութեր ուսումնասիրելուց հետո, գյուղացիական ծուխը Ռյազանի նահանգում կարող էր մշակել վոչ ավելի 9 դեսյատինից բոլոր յերեք դաշտերում, դրանցից մինիմում 4,5 դեսյատին պետք է հատկացվելին գյուղացիական տնտեսութեան համար, այսինքն կարվածատիրը չէր կարող ունենալ 4,5 դեսյատինից ավելի հերկ մի ծխի համար բոլոր յերեք դաշտերում¹⁾: Գ. Յեֆիմովնովսկին վարելահողի ավելի փոքր կտոր է ցույց տալիս, վորը կարող էր մի ծուխը մշակել կարվածատիրով համար, այն է՝ 30 դեսյատին հող յուրաքանչյուր դաշտում 100 ճորտ ունենալու դեպքում, այսինքն մոտավորապես 2,5—3 դեսյատին հող բոլոր յերեք դաշտերում մի ծխի համար²⁾:

19-րդ դարի սկզբին, յերբ աճեց և ամրացավ մասսայական շուկան գյուղատնտեսական արտադրութեաններէ համար, կարվածատիրով առջև կանգնեց արտադրութեան լայնացման հարցը: Թվում է, թե Արևմտյան Յեվրոպայի և մանավանդ անգլիական տեխնիկան և գյուղատնտեսութեան սխտեմը դրա համար բացում էյին բավականաչափ լայն հեռանկարներ: 19-րդ դարի առաջին քսան տարում կարվածատիրերի մեջ սկսեց ուժեղ շարժում՝ անգլիական փորձը փոխադրելու ուստական հողի վրա. կազմակերպվեցին մի քանի գյուղատնտեսական ընկերութեաններ, ուստերն թարգմանվեցին մի շարք ձեռնարկներ ուսցիտնալ գյուղատնտեսութեան մասին, գյուղատնտեսական ամսագրերն սկսեցին ուժեղ պրոպագանդ մղել խոտացանութեան, պտղափոխութեան սխտեմի, ավանդական հացահատիկներից նոր կուլ-

տուրաներին անցնելու ցեղական անասուններ բուծելու, այս կամ այն մեքենաներն ուղտադործելու համար և այլն: Այդ շարժումը վորոշ գործնական արդյունքներ տվեց: Կարելի չէ թվել տասնյակ կարվածքներ, վորտեղ փորձեր են կատարվել յեռադաշտ ցանքաշրջանաութեանը բազմազաշտով փոխարինելու¹⁾:

Բավականաչափ նշանակալից հաջողութեանների հասավ ճակնդեղաշաքարային արտադրութեանը, մեր ուսումնասիրած դաշտաշրջանի վերջում ճակնդեղ էր ցանված ավելի քան 35,000 դեսյատին և գոյութեան ունեյին 403 գործարաններ, վորոնք տարեկան արտադրում էյին 1,300 հազար փութ շաքար²⁾: Կատարելագործված հողագործական գործիքները և գյուղատնտեսական մեքենաները, մանավանդ կարխիչները և քամհարները դադարել էյին հաղվագյուլա իրեր լինելուց կարվածատիրական տնտեսութեաններում: 1833 թվից մինչև 1846 թիվը միմիայն յեղը, Բուտենոպների մեքենագործական հաստատութեանը բաց և թողել 1100 կարխիչ, 6060 քամհար, 1600 գութան, 125 արորացաքան, 1200 փոցիս, 550 ծղոտահատ և այլն, ընդամենը մի միլիոն արծաթ ուրբուր: 1853 թվին գոյութեան ունեյին 19 հաստատութեաններ, վորոնք պատրաստում էյին գյուղատնտեսական մեքենաներ, սակայն այդ հաստատութեաններն անգամ անկարող էյին լինում բավարարելու բոլոր պատվերները³⁾:

Սակայն 19-րդ դարի առաջին տասնամյակների գյուղատնտեսական շարժումը բերեց ընդհանուր առմամբ ավելի քիչ արդյունք, քան կարելի չէր սպասել: Պտղափոխութեան սխտեմը յերկար ժամանակ լիակատար պարտութեան կրեց: Խոտացանութեանը տեղեղ կիրառվեց, բայց դա ևս մի աննշան կաթիլ էր ավանդական յեռադաշտութեան անեղը ծովի մեջ:

1) Ն. Ա. Ռոժկով, «Ռուսաց պատմութեանը համեմատական պատմական լուսարանութեամբ», հատ. 10-րդ, էջ 22—25, 177—178, 279—280: Ոգանովսկի, «Ագրարային եվոլյուցիայի որինաչափութեանը», մասն 2-րդ, էջ 306—309. Գ. Յեֆիմովնովսկի, «Գյուղատնտեսութեանը Չերնիգովի նահանգի Սուրբի գավառում», «Журнал министерства государственных имуществ», մասն 15-րդ, բաժ. 2-րդ, էջ 19—21 և հետագա էջերը:

2) Ն. Ոգանովսկի, «Ագրարային եվոլյուցիայի որինաչափութեանը», մասն 2-րդ, էջ 311—312:

3) Պ. Ստրուվե, «Ճորտատիրական տնտեսութեանը», էջ 75—76:

1) Ա. Պովալիշին, «Ռյազանի կարվածատիրերը և նրանց ճորտերը», էջ 52—56:

2) «100 ճորտի համար վարելահողի 30 դեսյատին սխտական չափը յերեք դաշտերից ամեն մեկում համարվում է արդեն չափազանց ընդարձակ հերկ, վորը միայն կարվածութեամբ կարելի չէ մշակել» (Գ. Յեֆիմովնովսկի, «Գյուղատնտեսութեանը Չերնիգովի նահանգի Սուրբի գավառում»: «Журнал министерства государственных имуществ», մասն 15-րդ, բաժ. 2-րդ, էջ 7):

Անգլիական հնարքները հսկայական ոգուաներ տալու փոխարեն մեծ մասամբ խիստ զգալի վնասներ եյին հասցնում. շատ անգլոման-կա ըլածատերեր սնանկացան ոտարերկրյա նորություններ մտցնելու պատճառով: Գյուղատնտեսական գրականության մեջ արեւմտաեւրոպական որինակներով վոգելերվերուն հաջորդեց ակակցիա՝ վերադառնալ պապենական մեթոդներին և այդ ակակցիան պաշտպանում եյին պրակտիկ-տնտեսատերերը:

Բագմաթիվ գրքույկներում, վորոնք նվիրված եյին խտրենակ կալվածքների կառավարման սխառեմին, հանդեսների եջևրում և այլն¹⁾ սկսեցին չարաչար ծաղրել նորարար-կալվածատերերին և գերմանացի-կառավարիչներին:

Գյուղատնտեսության ռացիոնալացման փորձերն անհաջողություն կրեցին մասամբ այն պատճառով, վոր նրանք կատարվում եյին բագմաթիվ գեպքերում միանգամայն սղնվական կամ ավելի ձիշտը՝ Մանիլովյան ձևով: Այդ փորձերը կատարում եյին այնպիսի մարդիկ, վորոնք բոլորովին անպատրաստ եյին իրենց վրա վերցրած գերի համար, վոչ տեսականորեն և վոչ ել գործնականորեն ծանոթ չեյին շուկայի պայմաններին և ռուսական գյուղատնտեսական իրականությանը: Սակայն անհաջողության հիմնական պատճառն ավելի խորն եր գտնվում: Զգտելով հարցնել իր տնտեսությունն ավելի բարձր տեխնիկական մակարդակի նորարար-կալվածատերը բախվում եր մի ամբողջ շարք զժվարահաղթ որչեկտիվ խոչընդոտների հետ, վորոնցից գլխավորը ճորտատիրական հարաբերությունների գոյությունն եր:

Տնտեսությունը ռացիոնալացնելու գեպքում առաջավոր կալվածատիրոջ առաջ ծառանում եր կապիտալի հարցը, մինչդեռ հին տիպի կոռային տնտեսության համար կապիտալի պրոբլեմը գոյություն չուներ:

¹⁾ Տես, որինակ, «Վենյովի գալաոն աշխարհագրական, հողագործական և արհասարակ արդյունաբերական տեսակետից», եջ 35—42, Մոսկվա, 1852 թ.: Հեղինակը նկարագրում և մի խոշոր կալվածք, վորին գլուխ եր կանգնած գերմանացի-կառավարիչը: Գերմանացին մայրել եր բագմադաշտ ցանքաշարը՝ ջանառություն, սկսել եր ցանել արմատապտուղներ, վերակառուցել եր ջրադացն արևմտաեւրոպական ձևով և ժշակում եր գարուց դարձավար, բերել եր ավելի Գերմանիայից նրբաբուրդ վոշխարներ և այլն: Կալվածքն ամբողջովին քայքայվել եր, կալվածատերը վոնդել եր գերմանացուն և վերականգնել եր յետադաշտությունը:

Ճորտատերը գիտեր միայն մի կապիտալ—«աշխատանքի կապիտալը»,—ինչպես ասում եյին 19-րդ դարի առաջին կիսի տնտեսագետները, այսինքն գյուղացու անձնավորությունն իր ինվինտարի հետ միասին: Ընդհակառակը, նորարար-կալվածատերը մասամբ պետք ե փոխարինել «աշխատանքի կապիտալը» մի ուրիշ կապիտալով՝ արտադրության միջոցների ձևով: Կապիտալի ծախսումն ստեղծում եր գյուղատնտեսական արտադրության մեջ նոր գներ գոյացնող գործոն, վորը համարյա ծանոթ չեր նախկին տիպի կոռային տնտեսությանը: Ռացիոնալիզատոր կալվածատերն արգեն չեր կարող վաճառել իր տնտեսության մեջ արտադրվող ապրանքը՝ ինչ գնով վոր լինի: Նրա համար ընդունելի յեր միայն այնպիսի գին, վորը նախ ապահովեր «պարտադիր ռենտայի» ստանալը¹⁾, այսինքն կոռային կալվածքի նորմալ յնկամուտը և, յերկրորդ՝ կոմպենսացիայի յենթարկելու ծախսած կապիտալը և նրա տոկոսները: Առաջադեմ կալվածատերը, վորը կապիտալ եր ծախսել, պետք ե մրցել կոռային տնտեսության հետ, վորը համարյա չգիտեր, թե ինչ և նշանակում արտադրության ծախս: Վորպեսզի վաճառի իր արտադրանքները, ավանդական սխառեմով պահվող կոռային կալվածքը կարող եր զգալի չափով իջեցնել գները²⁾, վորովհետև այդ տեսակ իջեցումն առաջ եր բերում միայն յեկամտի մի փոքր նվազում, մինչդեռ ինտենսիվ տնտեսության համար այդ իջեցումը հաճախ նշանա-

¹⁾ Ա. Գ. Զարբոցկի-Գեյսառովսկու տերմինոլոգիան և («Հացի գների տատանման պատճառները»: Отечественные записки, № 5, 1847:

²⁾ Ա. Գ. Զարբոցկի-Գեյսառովսկին բերում և հետևյալ որինակը, «այս տարի սեպտեմբերի սկզբներին վարսակը ծախվում եր Մցենսկում և Տուլայի նահանգի հարևան տեղերում մոտ 6 ուրբլով չեովերալ: Մոսկվայում միևնույն ժամանակ վաճառվում եր չեովերալ մինչև 13 ուրբլով: Կալվածատեր Կ-վը վորոչեց վարսակը Մոսկվա ուղարկել վարձու արանսպորտով, յենթադրելով, վոր անբերելության պատճառով այդ հացի գինը կհասնի մինչև 20 ուրբլու: Փոխակրանքի համար նրանից չեովերալին վերցրել են 6 ուրբլի: Հետևաբար գոյթություն և ռենցել գների կատարելապես կանոնավոր հարաբերություն: Հանկարծ մի քանի որվա մեջ վարսակի գինը Մոսկվայում ընկնում ե 9 և 8 ուրբլի չեովերալին: Այսինչ Որյոլի և Տուլայի նահանգներում գինը մնում եր նույնը՝ մոտ 6 ուրբլի չեովերալը: Իսկ Մոսկվայում գինն ընկել եր նրանից, վոր կալվածատերերը չհնահատելով ճորտի աշխատանքը, շատ հաց եյին բերել, ավելի շատ, քան ձմեռը և կանգ չեյին առել գներն եժանացնելու առաջ» (Կոմս Գ. Գ. Կիսելովը և նրա ժամանակը», եջ 309-310):

կում եր մաքուր վնաս: Լիովին հասկանալի չե, վոր այն կարվածատերերի մոտ, վորոնք թեկուզ մասամբ, անցելեյին իրենց կարվածքներին ինվենտարացման (ИНВЕНТАРИЗАЦИЯ) և տնտեսութան ինտենսիվ ձևերին, քիչ-քիչ կուտակվել եր անրավականութան զգացմունք ճորտատիրական իրավունքի հանդեպ և ցանկութուն, վորպեսզի մնացած բոլոր կարվածատերերը զրկվին ճորտատիրական աշխատանքային ուժը և ճորտ գյուղացու տնտեսութունը միայն շահագործելով սահմանափակվելու հնարավորութունից և նույնպես ստիպված լինեն սեփական ինվենտար ձեռք բերել¹⁾

Կատարելագործված գործիքներ և մեքենաներ ձեռք բերելու, սեփական բանոց և ցեղական կաթնատու տնտեսուն կամ նրբարուրդ վոչխարներ գնելու, յեռագաշտից ավելի բարձր ցանքաշրջանառութան անցնելու հետ միասին նորարար-կարվածատիրոջ առաջ ծառանում եր հին տիպի կուսային տնտեսութանն անծանոթ հարց՝ ճորտատիրական գյուղացու բանվորական ուժի վորակի մասին: Աշխատելով կարվածատիրական վարի վրա, ճորտ գյուղացին մեծ խնամքով եր վարվում արորի, փոցխի և արտագրութան այլ գործիքների հետ, խնայում եր ձիու ուժերը, բայց միայն այն պատճառով, վոր այդ ամենն իր՝ գյուղացիական սեփականութունն եր: Պահանջել նրանից աշխատանքի հարկադիր բնույթի դիմաց նույնչափ ուշադիր և խնամքոտ վերաբերմունք գեպի մեքենաները, գործիքները և անասունը, վորոնք պատկանում եյին կարվածատիրոջը, համարյա անհնարին եր: Սովորաբար կարվածատիրոջ բարձրորակ ցեղական անասունը նիհարում եր և սատկում, ձիերը վոտնահար եյին լինում, թանգարժեք մեքենաներն արագութամբ փչանում և անգործութան եյին մատնվում և այլն: Կարվածատիրոջ անագին իշխանու-

¹⁾ 19-րդ դարի առաջին կեսի առաջագիմ կարվածատերերի վերաբերմունքը ճորտատիրական իրավունքին կարելի չե համեմատել Պետերբուրգի գործարանատերերի վերաբերմունքին հետ 70—90-ական թվականներին գործարանային որենսդրութանը: Պետերբուրգի գործարանատերերը պահանջում եյին կառավարութունից այնպիսի ուղենքներ, վորոնք սահմանափակեյին բանվորական ուղը և արգելեյին գիշերային աշխատանքները, վորպեսզի զրկեն իրենց մրցակիցներին կենարոնական-արդյունաբերական շրջանից, — վորոնք հնարավորութուն ունեյին շահագործելու եժան աշխատանքային ուժը, — նրանց համար ավելի մատչելի այդ առավելութունից: (Տես Տուգան-Բարանովսկի «Ռուսական գործարանը», էջ 309—310):

թյունը ճորտի անձնավորութան վրա ավելի թույլ դուրս յեկավ աշխատանքի ինտենսիվացման և նրա վորակի բարձրացման խնամման գործում, քան արձակվելու սպասնալիքը և աշխատավարձը բարձրացնելու խոստումը ձեռնարկու-կապիտալիստի ձեռքում:

Այժմ յենթադրենք, վոր կարվածատիրոջը հաջողվել և մասամբ գույքավորել իր տնտեսութունը և այս կամ այն կերպ լուծել բանվորական ուժի պլուրբումը, դիմելով, որինակ, սպասավորներին, ամսով վարձավածներին և ընչազուրկ գյուղացիներին աշխատանքի ոգտագործմանը¹⁾: Այդ դեպքում նա բաղվում և մի նոր հակասութան. գյուղացիական ծուխը, ճորտատիրական տնտեսութան այդ անհրաժեշտ և անխուսափելի պատկանելիութունը, դարձել եր ավելորդ: Մինչդեռ գյուղացիական ծխի ոգտագործման աստիճանի հարցը կարվածատիրոջ համար ամենեկին դատարկ հարց չեր: Գյուղացիական հողը և գյուղացիական ծուխն արդեն դարձել են առուծախի, վարկային-գրամական ոպերացիաների առարկա և այլն, նրանք մտել են, վորպես անկապտելի բաղադրիչ մի մաս, կարվածատիրական կարվածքի գնի մեջ: Վորչափով վոր ճորտատիրական տնտեսութան մեջ մտել եր «պատկերացման կապիտալիստական յեղանակը», նույն չափով ել գյուղացիական ծուխը դարձել եր «կապիտալ», վորը պետք և բերեր վորոջ «շահույթ»: Ճորտատիրական եկոնոմիկան ճնշում եր յուրաքանչյուր առանձին կարվածատիրոջ և դնում եր նրա առաջ դիլեմմա՝ կամ ոգտագործել գյուղացիական ծուխը լրիվ 100% ով, վորն անխուսափելիորեն պետք և ստիպել նրան հրաժարվելու վորեկ տեխնիկական կատարելագործութունից²⁾, կամ կանգնել տեխնիկական պրոգրեսի ճանապարհի վրա, բայց այդ դեպքում

¹⁾ Ընչազուրկ-գյուղացիներ և «բոտանչիներ» մանավանդ շատ եյին բելուուսական նահանգներում և Հարավարևմտյան Յերկրում, վորտեղ նրանք «ճեռիտն կու» եյին կատարում:

²⁾ Բերելով Վիլլիսոսի հողվածներից մեկի բավանդակութունը, Յու. Յ. Սամարինը գրել և. «Մի կարվածատիրոջ առաջարկել են ձեռք բերել իր համար կալիչ մեքենա, բայց նա խոստովանելով մեքենայի բոլոր արժանիքները, պատասխանել և, թե դա իր համար ձեռնաու չե: «Ինչու, — հարցում և տերը պարմացած. — իհարկե, պարոնս, — պատասխանում և կարվածատերը, — յեթե յես կալիչ առնեմ, ապա ի՞նչ պետք և անեն իմ ճորտ կանայք ամբողջ ձմեռը»: (Յու. Յ. Սամարին, յերկերի ժողովածու, հատ. 2-րդ, էջ 44):

խզել կապը գյուղացիական անտեսութեան հետ, դրա փոխարեն ձգտելով ստանալ զբաժանական փոխհասուցում:

Այսպիսով ճորտատիրական անտեսութեան զարգացումը 19-րդ դարի առաջին կիսին հասցնում է նրան անհաշտ ներհակութեան. վաճառքի համար յեղած հացի արտադրութեանը զրոյել է կարվածատիրոջն ոգտագործել արեւմտակրոնական գյուղատնտեսական տեխնիկայի նվաճումները, իսկ տեխնիկական կատարելագործութեաններն իրենց արդյունքն են ունեցել կարվածատիրական անտեսութեան մի այնպիսի վերակառուցում, վորը բոլորովին չէր կարելի հաշտեցնել ճորտատիրական հարաբերութեաններին գոյութեան հետ:

7.

Գյուղատնտեսական արտադրութեան լայնացման պահանջը և կոռային գյուղացիներին աշխատանքի ցածր վորակն ստիպում էին կարվածատերերին մտածել ճորտատիրական աշխատանքի այնպիսի կազմակերպման մասին, վորն ինքնին կարողանար ապահովել նրա արտադրողականութեան բարձրացումը: 30—50-ական թվականներին ազրոնոսիական և անտեսագիտական զբաղանութեանը, վորն սպասարկում էր պրակտիկ-կարվածատերերին, զգալի չափով նվիրված էր այդ չափազանց բարդ հարցի լուծմանը:

Ամենից առաջ կարվածատերն աշխատում էր ստիպել գյուղացիներին, վոր սովորական տիպի կոռի մեջ նրանք վորքան կարելի յե ինտենսիվ կերպով աշխատեն: Կոռային աշխատանքներ կատարելիս կամ կարվածատերը և կամ նրա գործակատարը մտրակը ձեռքին շարունակ հետևում էին գյուղացիներին և հետ մնացողներին ձեռնում¹⁾: Ռյազանի նահանգի կարվածատեր մայոր Չ-ին այն տեղն էր հասել, վոր հողային աշխատանքների ժամանակ բանվորների վրայից հագցնում էր մի առանձին տեսակ պատրաստած պարաստիկներ, վորպեսզի նրանք հնարավորութեան չունենան հանգստանալու համար պառկելու²⁾: Վորովհետև

¹⁾ Կոռային աշխատանքներին հետևելու փայլուն օրինակ է ալիս Մ. Յե-Սալաիկով-Շչեգրինն իր «Историческая старина»-ում, բնութագրելով «որի նակելն անտես» Աբսենիյ Պոտապովիչ Պուստոտեղովին:

²⁾ Ա. Ի. Կոչելով, «Գրութեաններ», էջ 60:

չնայած մշտական հսկողութեան և ամենադժան խստութեաններին՝ աշխատանքային ճորտերն աշխատում էին չափազանց դանդաղկոտ, շատ կարվածատերեր սխեցին անցնել կոռային աշխատանքների կողարային կազմակերպութեան: Կարվածատիրական հերկը բաժանվում էր դեպատինների և յուրաքանչյուր ծուխ ստանում էր վորոշ՝ որական կամ շարաթական կողար: Կողարներով էր կատարվում կոռը Չերնիգովի նահանգի Սուրափի գավառում, ըստ վորում ծանր չէին համարվում գյուղացիներին համար հետեյալ կողարները, որական մի դեպատին հերկելը—յերեք հոգի ձիով աշխատողներ, փոցիելու համար—մի աշխատող յերկու ձիով, ցանելու համար—մեկ աշխատող առանց ձիու, հնձելու համար—յոթ կին, կրելու համար—մի ձիով աշխատող, կալելու և քամհարելու համար—չորս հոգի առանց աշխատողներ¹⁾: Ռյազանի նահանգի բոլոր կանոնավոր կազմակերպված կարվածքներում կոռային աշխատանքը նույնպես կողարներով էր կատարվում: Կողարային նորմաները համարյա նույնն էին, ինչ վոր Չերնիգովի նահանգում²⁾: Շատ հաճախ գյուղացիներն ստանում էին գիտավորյալ կերպով անիրագործելի կողարներ, որինակ, կոռի Շ-վների կարվածքում, Պենզայի նահանգում, այս պատճառով էլ ստիպված էին աշխատել կոռով շարաթվա սովորական յերեք որից շատ ավելի³⁾:

Կողարային կազմակերպութեան ավելացնում էր կոռային աշխատանքի քանակութեանը, բայց մեծ մասամբ միանգամայն աննպաստ էր նրա վորակի համար: Տնտեսագետ ճորտատերերն իրուր տեղն էին դրուել շարգում, թե ինչպես բարելավեն աշխատանքի վորակը կոռային սիտեմի սահմաններում: Փորձեր էին կատարվում, յերբեմն չափազանց եկզոտիկ փորձեր, այն նպատակով, վոր բոլորովին այլ կերպ կազմակերպեն գյուղացիական ճորտական աշխատանքը: Բազմաթիվ «պրոֆեկտներների» (ծրագրեր կազմողներ) խոսքերին հավատալով, այդ փոր-

¹⁾ Գ. Յեխոնոսովսկի «Գյուղատնտեսութեանը Չերնիգովի նահանգի Սուրափի գավառում», «Журнал министерства государственных имуществ», մասն 15-րդ, բաժ. 2-րդ, էջ 9, 10 և 17:

²⁾ Ա. Պովալիշին, «Ռյազանի կարվածատերերը և նրանց ճորտերը», էջ 62—63.

³⁾ Ա. Պ. Զարուցկի-Գեյստովսկի, «Կոռի Պ. Գ. կրիկովը և նրա ժամանակը», հատ. 4-րդ, էջ 279:

ձեռքը փայլուն արդյունքներ են տվել, սակայն կարվածատերերի մեծամասնությունը համառորեն շարունակում էր մնալ անտեսություն արագիցիոն ձևերի մեջ: Գյուղացիների բարեկեցությունը բարձրացնելու և կարվածատիրոջ յեկամուտներն ավելացնելու համար վորպես միջոց հանձնարարվում էր, որինակ, ամբողջ հողի մշակման արտերսյան կարգը—և՛ գյուղացիական, և՛ կարվածատիրական հողի ոգուաը կիսելու պայմանով¹): Վիլիինան առաջարկում էր շատ որբերնալ ծրագիր, վորը, ինչպես ինքն էր հավատացնում, հաջողություն կիրառել և կյանքի մեջ իր պատը—ստեղծել գյուղացիական իրարից խորթ ընտանիքներ, վորոնց գլուխ կանգնած կլինեն կարվածատիրոջ կողմից նշանակված պետեր, այս վերջիններս պատասխանատու յեն կոռային աշխատանքների բարեխղճորեն և իր ժամանակին կատարելու համար²): Մի քանի կարվածատերեր վորձեցին բարելավել կոռային աշխատանքի վորակը, կրճատելով իրենց հերկը և լայնացնելով գյուղացիներին³), բայց այդպիսի համարձակ նորարարներ ուես ազնվականություն ձեջ շատ քիչ գտնվեցին:

19-րդ դարի առաջին կիսի ընթացքում շատ կարվածատերեր կամաց-կամաց յեկան այն յեղրակացություն, վոր զարգացման տվյալ ստորիճանի վրա ամենաբարձրորակ և ամենից արտադրողական աշխատանքն ազատ վարձու աշխատանքն և և վոր աշխատանքի վերակառուցման բոլոր ծրագրերը ճորտատիրական իրավունքի սահմաններում միայն պալիտիվներ կլինեն և վոր մի դեպքում չեն կարող տալ այն, ինչ վոր կտա ազատ վարձու աշխատանքը: Ազատ վարձու աշխատանքի առավելությունները, բացի նրա բարձր վորակից, պարզապես նկատելի էյին նակ շնորհիվ կոռային արտադրություն կազմակերպություն մի քանի ուրույն հատկությունների: Ճորտատիրական իրավունքի ժամանակ կարվածատերը կապված էր աշխատողների վորոջ կոնտիգենտի հետ, վորը դժվար էր կրճատել կամ լայնացնել: Մինչ-

դեռ գյուղատնտեսական աշխատանքները տարվա ընթացքում բաշխվում էյին չափազանց անհամաչափորեն, այնպես վոր յերբեմն ճորտ աշխատավորները լիովին չէյին ոգտագործվում, իսկ յերբեմն, ընդհակառակը, շտապ աշխատանքը չեր կատարվում բանվորական ձեռքերի սլակասություն պատճառով: Ազատ վարձու սխտեմը գերադասելի յեր մեծ ձկուսություն, վարձու բանվորների քանակը հեշտություն կարելի յեր կարգավորել կրճատելով կամ լայնացնելով նայած արտադրության պահանջներին:

Վաճառման համար հացի արտադրության զարգացումն այն տեղը հասցրեց, վոր գյուղատնտեսություն ձեջ սկսեց ավելի և ավելի կիրառվել ազատ վարձու աշխատանքը: Ռեֆորմի նախորդակին գոյություն ունեյին բավական շատ խոշոր տնտեսություններ, վորոնք ամբողջովին պահպանվում էյին վարձու աշխատանքով և ավելի շատ այնպիսիները, վորոնք ոգտվում էյին մասամբ ճորտատիրական և մասամբ էլ վարձու աշխատանքով: Ազատ վարձու աշխատանքի կիրառումը հասավ առանձնապես լայն չափերի տափաստանային բազմահող ծայրագավառներում, —Նովորոսիայում և Անդրվոլգիայում: Սերսոնի, Յեկատերինոսլավի և Տավրիկյան նահանգներն ամեն տարի հյուսիսից գալիս էյին մինչև 300,000 հողի գյուղատնտեսական աշխատանքներին վարձվելու համար¹): Ճիշտ է, հողի գարնանային և աշնանային մշակումն այդ տեղերում կատարվում էր դեռևս ճորտատիրական աշխատանքով, բայց հացը հավաքում էյին գլխավորապես վարձու աշխատավորները ոգնություն: Նովորոսիային շատ մոտիկ հյուսիսային տափաստանային շրջաններում, որինակ, Վորոնեժի նահանգի հարավային գավառներում, հացի և խոտի հավաքի ժամանակ ճորտատիրական աշխատանքի հետ միաժամանակ կիրառվում էր նակ ազատ վարձու աշխատանքը²): Կիևի նահանգում ճակնդեղաշաքարային արտադրության զար-

¹) Պ. Սարուվե, «ճորտատիրական տնտեսություն: ճորտ գյուղացիների արտերսյան կազմակերպությունների վորձեքը», էջ 171—212: Վ. Ն. Սեմևսկի, «Գյուղացիական հարցը Ռուսաստանում 18-րդ դարում և 19-րդի առաջին կիսում», հատ. 2-րդ, էջ 88—89:

²) Յու. Ֆ. Սամարին, յերկրի ժողովածու, հատ. 2-րդ, էջ 53—54:

³) Ն. Ա. Ռոժկով, «Ռուսաց պատմությունը պատմական համեմատական լուսաբանություն», հատ. 10-րդ, էջ 179—180, 282—283:

¹) Վ. Ն. Պիչեռա, «Ռուսաստանի ժողովրդական տնտեսություն պատմությունը 19—20-րդ դարերում», էջ 113:

²) ճորտատիրություն շրջանում վարձու աշխատանք կիրառելու մասին գրում և վարոնեժի կարվածատեր իշխան Ա. Վ. Մեշչերսկին իր նամակում պետական գոյրերի մինիստրին (Ն. Ա. Ռոժկով, «ճորտատիրական իրավունքի անկման տնտեսական պատճառների հարցը», «Мир Божий», № 2, 1902 թ., էջ 164):

դացման հետևանքով¹⁾ կարվածատերերն սկսում են ոգտվել վարձու աշխատանքից այնքան նշանավոր չափով, վոր ճորտատիրական հարաբերությունները մինչև հիմքը խախտվել էյին: Ընդհակառակը, սեահողային կենտրոնում և կենտրոնական արդյունաբերական մարդում վարձու աշխատանքից ոգտվում էյին միայն սակավաթիվ վաճառականական և խոշոր վարձակալական անաեսություններում²⁾, իսկ կարվածատերերի կողմից ազատ վարձու աշխատանք կիրառելու դեպքերը յեղակի էյին: Ի. Ի. Իգնատովիչը խմբագրական հանձնաժողովների աշխատությունների նկարագրությունները համաձայն հաշվել է 100 հոգուց ավելի ճորտեր ունեցող ընդամենը տասնմեկ կարվածք՝ Պետերբուրգի, Մոսկվայի, Տվերի, Կուբսկի, Ռյազանի, Տամբովի և Տուլայի նահանգներում, վորոնցում ամբողջությամբ կամ մասամբ տընտեսությունը տարվում էր վարձու աշխատանքի ոգնությամբ³⁾:

1) «Ճակնդեղի մշակույթն առաջ բերեց ազատ աշխատանքի անադին պահանջ, բարձրացրեց նրա արժեքը և սովորեցրեց կարվածատերերին հարգել այն: Առաջ ուրիշի փախստակ գյուղացուն վարձելը համարվում էր անագնիվ գործ, այժմ բոլորն էլ անում են այդ՝ անհրաժեշտությունից ստիպված և վոչ վոք չի գանդատվում: Ճակնդեղ մշակող կարվածատերերը կանչում են գեղջկուհիներին հարևան գյուղերից, նրանք գայիս են հաղարներով և պայմանավորվում են գնի մասին: Ուրիշները քաշում են նրանց իրենց կողմը՝ խոտանալով այլևի բարձր աշխատավարձ. սկսվում է սակարկություն, բայց ճորտատիրական իրավունքի մասին այլևս վոչ մի խոսք: Ազատ աշխատանքի պահանջն այնքան մեծ է, բանվորական ուժի ձգտումը դեպի նա այնքան անգուսպ է, վոր հնացած սրենքի տառի վրա հիմնված հրամանները, թվում է թե, լսել են» (Յու. Ֆ. Սամարին, յերկերի ժող., հատ. 2-րդ, էջ 5):

2) Վ. Պրևորսկի, «Տվերի նահանգի նկարագրությունը գյուղատնտեսական տեսակետից», էջ 104. Գ. Յեսիմանովսկի, «Գյուղատնտեսությունը Չերնիդովի նահանգի Սուրաժի գավառում», Журнал министерства государственных имуществ, մասն 15-րդ, բաժ. 2-րդ, էջ 9. Ա. Պ. Չարլոցկի—Իեսյատովսկի, «Կոմս Պ. Գ. Կիտելյովը և նրա ժամանակը», հատ. 4-րդ, էջ 283. Վ. Սեմևսկի, «Պ. Ռոժկովի հողվածի առթիվ», «Русская Мысль», ապրիլ, 1902 թ., էջ 136:

3) Ի. Ի. Իգնատովիչ, «Կարվածատիրական գյուղացիներն ազատության նախորդակին», էջ 172:

Վերը մենք հաստատեցինք, վոր անտեսական զարգացման ընթացքն անհաղթելիորեն հրում էր ուսու կարվածատիրոջը 19-րդ դարի առաջին կեսում գյուղատնտեսական արտադրության լայնացման ուղին: Հացի գները ցածր մակարդակը 20—40-ական թվականներին վոչ միայն չէր թուլացնում արտադրությունը լայնացնելու ձգտումը, այլ վորոչ չափով նույնիսկ ուժեղացնում էր այն ցածր գների պատճառով. չտանալով պատշաճ յեկամուտ՝ կարվածատերն աշխատում էր վարձատրել իրեն՝ արտադրվող սպրանքի մասսուն ավելացնելով: Շուկայի պայմաններն ու ճորտատիրական հարաբերությունների առկայությունը խանգարում էյին անտեսության ինտենսիվացմանն ու աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և հարկադրում էյին կարվածատիրոջը գնալ նվազագույն դիմադրության գծով: Տնտեսության տեխնիկական մակարդակը մնում էր առաջվանը, բայց ճընշումն անմիջական արտադրողի վրա շատ սաստիկ ուժեղանում էր: Գյուղացին պարտավոր էր առլ կարվածատիրոջն իր աշխատանքի ավելի և ավելի մեծ ժառը, հասցնելով իր սեփական պահանջները ծայրահեղ միևրմումի:

Կարվածատիրական արտադրության եքստենսիվ լայնացումը կատարվում էր ամենից առաջ նոր հողերի հերկման հաշվին: Դա լիովին հնարավոր էր այնտեղ, վորտեղ դեռևս ազատ հող շատ կար՝ Նովորուսիայում, Մերձագովում, տափաստանային Անդրվոլգյան Յերկրում, Ռեֆիմի և Որենբուրգի նահանգներում: Լայնացնելով իր վարելահողը, կարվածատերը միևնույն ժամանակ թողնում էր գյուղացիներին նրանց նորմալ գործածական հողաբաժինները: Գյուղացիներից նրան միայն մի բան էր հարկավոր—աշխատանքային ուժը: Սակայն գյուղացիական ծխի արտադրողական հնարավորությունները բավականին սահմանափակ դուրս յեկան: Տալով կարվածատիրոջն աշխատանքի չափազանց շատ ժամանակ, գյուղացին չէր կարողանում ինչպես հարկն և մշակել իր հողաբաժինը և դրա համար էլ չէր կարողանում կերակրել իրեն մինչև նոր բերքը և մատակարարել կարվածատիրոջ վարին՝ հարկավոր քանակությամբ և պատշաճ վորակի բանող անասուն: Կարվածատերն ստիպված էր նախ ունենալ սեփական բանող

անասուն, յերկրորդ՝ գյուղացիների մի մասը դարձնել տնային սպասավորներ¹⁾, յերրորդ՝ մի քանի աշխատանքներ կատարելու համար վարձել ազատ բանվորներ և, այսպիսով հիմնովին վնասել տնտեսութեան ճորտատիրական կարգին:

Բոլորովին այլ եր դուրս չունը կենտրոնական-հողագործական նահանգներում և Միջին Վոլգայի յերկրում: Այստեղ արդեն 19-րդ դարի առաջին տասնամյակներում հերկված եր հացահատիկային կուլտուրաների համար պետքական հողերի մեծ մասը: Կարվածատիրոջը միայն մի ճանապարհ եր մնացել իր վարը լայնացնելու համար—կրճատել մինչև մինիմում գյուղացիական հողաբաժինները, վորը հնարավոր եր հողագործութեան յեռագաշտ սխտեմի ղեպքում²⁾: 19-րդ դարի կիսերին կարվածատիրական տնտեսութունը լիովին ոգտագործել և այդ միջոցը: Վ. Ի. Սեմեվսկու տվյալների համաձայն, 18-րդ դարի վերջում կոտլոր գյուղացու միջին հողաբաժինը մի հողուն՝ սեահոգային նահանգներում հավասար եր 7 ղեսյատին հարմար հողի, իսկ բաշտային հողը՝ 13¹/₂ ղեսյատին: Ռեֆորմին նախորդած կես հարյուրամյակի ընթացքում գյուղացիական հողագտագործումը հարբերարար կրճատվել եր յերկու-յերեք անգամ, հասնելով կենտրոնական-հողագործական և Միջին-վոլգայան նահանգներում մի ճորտին 2,8 ղեսյատին³⁾: Մի քանի շրջաններում գյուղացիական հողաբաժինները նույնիսկ այդ խոճուկ նորմայից ել փոքր եյին: Որինակ, Կուրսկի նահանգի Բեյբորոգի գավառում գյուղացիներն ունեյին 1,1-ական ղեսյատին մի ճորտին, Գրայ-վորոնի գավառում՝ 1,2, Կորոչանի գավառում՝ 1,7, Ռյազանի նահանգի Ռյաժսկի գավառում՝ 1,9⁴⁾:

¹⁾ Բազմանոց նահանգներում կար սպասավորների մարսիմալ սակոս ճորտատիրական բնակչութեան համեմատ:

²⁾ Ա. Պովալիշինը ժամանակակիցների վկայութունների և իր սեփական հաշվառումների հիման վրա յեկել և այն լիովին հիմնավորված յեզրակացութեան, վոր 7 ղեսյատին հողաբաժինը մի ծիխ համար (մտտավորապես 2,5 ղեսյատին մի ճորտին) Ռյազանի նահանգում մինիմալ չափ եր, վոր կարող եր կերակրել գյուղացիներին և նրանց աշխատանքային ուժերը («Ռյազանի կարվածատերերը և նրանց ճորտերը», էջ 55—56): Կենտրոնական-հողագործական մարզի այդ նահանգներում գյուղատնտեսութեան պայմանները շատ բշով եյին տարբերվում Ռյազանի նահանգի պայմաններից:

³⁾ Ն. Որանովսկի, «Ագրային եվոլյուցիայի սրինաչափութունը», մասն 2-րդ, էջ 314—315:

⁴⁾ Ա. Սկրեբելի, «Գյուղացիութեան գործն Ալեքսանդր 2-րդ կայսրի թագավորութեան սրով», հատ. 3-րդ, էջ 1287—1289:

Ճարով գյուղացուն աղքատիկ հողաբաժին, Հնայած դրան, կարվածատերը պահանջում եր նրանից խիստ ղզալի, լարված ու քայքայիչ աշխատանք տիրոջ ցանքսի համար: Կենտրոնական սեհողային և Միջին Վոլգայի մարզերի բոլոր նահանգներից միայն Տուրայի նահանգում կարվածատիրոջ անմիջական շահագործման ներքո յեր գտնվում մի քիչ պակաս հող, քան գյուղացիների հողն եր¹⁾, իսկ մյուս նահանգներում կարվածատիրական հողագտագործումը հավասար²⁾ եր գյուղացիականին, կամ նույնիսկ գերազանցում եր նրանից³⁾: Այսպես եր միջին հարբերութունը կարվածատիրական և գյուղացիական հողագտագործութեան մեջ բոլոր կարվածքներում, ինչպես կոռային, նույնպես և բահրային: Իսկ յեթե վերցնենք միայն կոռային կարվածքները, այն ղեպքում հողերի բաշխումը, հայտնապես, կլինի ավելի ևս ի վնաս գյուղացիներին³⁾:

¹⁾ Ա. Սկրեբելի, «Գյուղացիութեան գործն Ալեքսանդր 2-րդ կայսրի թագավորութեան սրով», էջ 1285: Ամբողջ կարվածատիրական հողը կազմում եր 5 ղեսյատին մի հողուն, վորից գյուղացիների ոգտագործման մեջ եր գրանվում 2,6 ղեսյատին, իսկ կարվածատերերի՝ 2,4 ղեսյատին մի հողուն:

²⁾ Ա. Սկրեբելի (նույն տեղը, էջ 1286—1289) բերում և հետևյալ տվյալները.

ՆԱՀԱՆԳՆԵՐԸ	Դ Ե Ս Յ Ա Տ Ի Ն մ ի հ ո գ ու Ն	
	Ամբողջ կարվածատիրական հողը	Գյուղացիական հողաբաժին
Ուրյոլ	5,7	2,6
Կուրսկի	4,7	2,1
Ռյազանի	5	2,5
Վորոնեժի	6,5	2,6
Տամբովի	6	3
Պենզայի	6	2,8
Կազանի	9	3
Սիմբերսկի	8,3	2,9

³⁾ Ն. Ա. Ռոժկովն իր հողվածքներից մեկում («Ռուսաստանի ճորտատիրական տնտեսութեան պատմութեան նյութի ընտրութեան և ուսումնասիրութեան մասին», «Պատմական և սոցիոլոգիական ակնարկներ» ժողովածուի մեջ, մասն 2-րդ) նկարագրում և բավականին տիպիկ կոռային կարվածք-Տուրայի նահանգի Բեյկսկի գավառի Բոդորովսկի նույն և ժիմորինո գյուղը: Կարվածքն ուներ ընդամենն 807 ղեսյատին, վորից 119-ն անտառ եր, հետե-

Այսպիսով կարվածատիրական վարելահողը սեփորմից մի-
քանի տասնամյակներ առաջ հասել էր արդեն իր ծայր սահ-
մաններին: Նրա հետագա լայնացումը բացարձակապես անհնա-
րին էր, քանի հողի արտադրողականութունը մնում էր հին մա-
կարգակի վրա: Կարվածատերն ստիպված էր պաշտպանողական
դիրք բռնել: Ամենաշատը, նա ինչի վրա կարող էր հույս դնել,
դա այն էր, վոր նա պահպաներ վարելահողը, հետևապես նաև
յեկամուտները նախկին չափով: Մինչդեռ ամբողջ տնտեսական
պայմանները և մեծացող անձնական պահանջներն ստիպում էին
ավելացնել յեկամուտները: Այդ հողի վրա կարվածատիրական
տնտեսութունը մտնում է յերկարատև «ճգնաժամի» շրջան:

Ռեֆորմին նախորդած վերջին տասնամյակների ընթաց-
քում կարվածատիրական տնտեսության «ճգնաժամը» Սևահողա-
յին կենտրոնում և Մերձվոլգյան յերկրում տարեցատարի սրվում
էր: Կարվածատիրոջ համար դժվար էր նույնիսկ հին դիրքերում
մնալը: Տնտեսության ճորտատիրական կարգն սկսեց քայքայվել
ամենից առաջ գյուղացիական ծխի կողմից:

Մշակման համար պետքական հողի մեծ մասը հերկված էր:
Այդ պատճառով էլ կարվածատերը տալիս էր գյուղացիական
ծխին մի այնպիսի աննշան հողաբաժին, վոր նրանից վորպես
կանոն, կարելի էր ստանալ միայն գյուղացու գոյության և նրա
աշխատանքի պայմաններին անհրաժեշտ արտադրությունների
միևնիստ քանակութունը: Միայն Սևահողային կենտրոնի շատ
քիչ կարվածքներում գոյություն ունեցին պահեստի հողեր նոր
կազմակերպվող ծխերին տալու համար: Իսկ մեծ մասամբ ճորտ
բնակչության աման դիպքերում կարվածատերը կամ բաժանում
էր գյուղացիական հողերը, առանց ձեռք տալու իր հողերին,
կամ թողնում էր ավելացած աշխատողներին ծխի վրա աշխա-

վաբար գյուղատնտեսական ոգտագործման մեջ էր 608 դեսյատին: Այդ հողը
բաժանված է այսպես. կարվածատիրոջ ձեռքին էր 397 (65,3⁰/₀) դեսյատին,
գյուղացիների ձեռքին՝ 210 դես. (34,7⁰/₀): Արական սեռի գյուղացիներ կային
65 հոգի, վորոնք կազմում էին 25 ծուխ: Ունենալով սեփական հերկ 180
դեսյատին, այսինքն 7,2-ական դեսյատին մի ծուխ համար, գյուղացիները
պետք է մշակեյին կարվածատիրական 397 դեսյատին վարելահողը, այսինքն
14,35 դեսատին ամեն մի ծուխ համար:

տելու, առանց հողաբաժնի¹⁾: Առաջին դեպքում հողի մասնա-
տու մն ավելի հեռուն էր անցնում այն սահմաններից, վորոնք
պայմանավորվում են գյուղատնտեսության արտադրողականու-
թյան տվյալ մակարդակով և հողաբաժինը դադարում էր գյու-
ղացուն գոյության պահպանման համար բավարար չափով մի-
ջոցներ տալուց. յերկրորդ դեպքում հողի վերաբաժանման ար-
գելքը միայն պալիստիվ միջոց էր հանդիսանում, վորովհետև,
միևնույն է, հողով առաջվա չափով պահովված ծխից պետք է
կերակրվեյին ավելորդ բերաններ:

Բայց գյուղացիական ծուխը չէր կարող պատշաճ ձևով մշա-
կել նույնիսկ այդ հողաբաժինը, վորը բոլորովին քիչ էր և ու-
ներ հետագայում պակասելու տենդենց: Կոռաչին աշխատանքը շե-
ղում էր գյուղացիական տնտեսությունից անաղին ուժեր և մի-
ջոցներ, ըստ վորում այն վլասը, վոր գյուղացին կրում էր կո-
ռից, անհամեմատ ավելի մեծ էր այն ոգուտից, վոր ստանում էր
նրանից կարվածատերը²⁾: Գյուղատնտեսական անհետաձգելի աշ-

1) «Բազմահող կարվածքներում սովորաբար կան պահեստի հողեր ապագա
ծխերի համար՝ բնակչության ավելանալու դեպքում: Բայց այն կարվածքներում
վորտեղ հողը, ինչպես ասում են, հաղիվ էր բավականացնում, ծխերի քանակը
շատանալու դեպքում վերաբաժանում են գյուղացիական հողերը, առանց դիպ-
չելու կարվածատիրական հողերին» (Ա. Գ. Զաբլոյկի-Գեյստովսկի, «Կոռա-
չ. Գ. Կիսելյովը և նրա ժամանակը», հատ. 4-րդ, էջ 276):

«Մակավահող մասնավոր կարվածքներում, վորտեղ հողը վաղուց է բա-
ժանված, վորտեղ չկա պահեստի հող, ծխերի թիվը, վորին համապատասխա-
նում է հողաբաժինների հավասար թիվ, չի ավելանում, վորքան էլ վոր
աճի բնակչութունը: Կարելի է տեսնել տներ, բաղկացած 5 ամուսնացած
աշխատավորներից, վորոնք վարում են յերկու կամ յերեք ծուխ. այստեղ ար-
դեն ծուխը կորցրել է իր անձնական բնույթը և ստացել է անշարժ հողամա-
սի նշանակութուն» (Յու. Ֆ. Սամարին, յերկեր, հատ. 2-րդ, էջ 168):

«Իրերի այդ կարը (նոր ծխերի կազմելը—Գ. Գ.) վաղուց է վերացե-
ծուլայի, Ռյադանի, Մոսկովայի և այլ նահանգներում: Այստեղ սովորաբար
պատահում է կարվածքներում միանգամ ընդմիջտ սահմանված և անփոփոխ
ծխերի թիվ (2¹/₂-ից մինչև 7 հողի ամեն մեկին) և համապատասխան ու նույն-
պես անփոփոխ հողամաս: Այստեղ խոսք չի կարող լինել ծուխի հիմնելու մասին
մինչև աշխատավորի հայտնի հասակն առնելը, վորովհետև ծուխը չեն կտրում,
այլ խլում են իրար ձեռքից» (Յու. Ֆ. Սամարին, հատ. 3-րդ, էջ 64—65):

2) «Ամենաթեթև կոռը գյուղացիները համար ավելի ծանր է չափավոր
բանրայից, վորորհետև կարվածատիրոջ համար աշխատելու կարգադրը ծայր
աստիճանի նեղում է նրանց՝ աշխատանքային ուժի դործադրության և անա-
լին պարապմունքների մեջ: Այստեղից ծագում է աշխատանքի և ժամանակի

խատանքներ կատարելու համար ամենահարմար որերը ստիպված կորցնում էր կալվածատիրական հերկի վրա, և գյուղացին պետք է ցաններ իր հողաբաժինը ժամկետից ուշ, հավաքեր հացն անձրևոտ յեղանակին և այլն: Սխտեմատիկ կերպով թշուրհից նիհարած և ուժից վեր աշխատանքից տանջված ձիով գյուղացին շատ վատ էր հերկում թե իր, և թե կալվածատիրական հողը: Վատ մշակված և հարկավոր քանակությամբ պարարտանյութեր¹⁾ չստացած գյուղացիական հողն «ուժից ընկնում էր» և ավելի ու ավելի վատ բերքեր էր տալիս²⁾:

Այսպիսով գյուղացիական տնտեսությունն ապահովված էր հողով և աշխատանքի այլ պայմաններով այնքան, վոր նրա մեջ լավագույն դեպքում կարող էր կատարվել միայն սոսկ վերարտադրություն: Բայց քանի վոր ճորտատիրական տնտեսական սխտեմը կառուցված է գյուղացիական և կալվածատիրական տնտեսությունների զուրգորտություն վրա, այս պատճառով էլ կուռա-

ահադին վատնում անողուտ կալվածատիրոջ համար, մասաբեր գյուղացիներին համար... Յեթե յենթադրենք, վոր գյուղացին կուռ վրա կատարում է 20 կոպեկի աշխատանք, ապա կարող ենք համարձակ ասել, վոր հենց նույն գյուղացին աշխատելով այդ որն իր դաշտում, բանջարանոցում կամ մի վորևէ այլ գրադմունքի վրա, կվատակեր 30 կոպեկ: Այսպես, 10 կոպեկ կորչում է իզուր տեղը: Այդ փողը կորցնում է գյուղացին, իսկ կալվածատերը չէր ստանում: (Յ ու Ք Ս ա մ ա Ր ի ն, յերկեր, հատ. 2-րդ էջ 61):

¹⁾ Յուրաքանչյուր 100 բնակիչ հենտրոնական-հողազործական մարզում ռեֆորմի նախորդակին ունեյր 30,7 գլուխ յեղջյուրավոր անասուն (Ն. Ո գ ա ն ո վ ս կ ի, «Ազրարային եվոլյուցիայի որինաչափությունը», մասն 2-րդ, էջ 250): Անասունների այսպիսի քանակությունը բավական էր հողը պարարտացնելու համար յեռագաշա սխտեմի դեպքում: Պետք է ինկատի առնել նաև, վոր գյուղացիական ազրի մի մասը տարվում էր կալվածատիրական հողի վրա:

²⁾ Ա. Ֆ. Ֆորտունատովի հաշվով, վոր նա կատարել է առանձին կալվածքների գրանցումների հիման վրա, հաճարի բերքերը Յեվրոպական Ռուսաստանում 19-րդ դարի առաջին կիսում անդադար ընկնում էին: Ն. Ոգանովսկին («Ազրարային եվոլյուցիայի որինաչափությունը», մասն 2-րդ, էջ 383) բերում է հետևյալ ավյալները հաճարի բերքի մասին, հաշվելով չեպկերտներով դեպյատինից.

Տարիները	
1800—1809	. . . 8,1
1810—1819	. . . 6,9 7,24
1820—1829	. . . 6,7
1830—1839	. . . 6,4
1840—1849	. . . 6,6 6,48
1850—1859	. . . 6,4

յին կալվածքի գյուղացիական սեկտորում տեղի ունեցող պրոցեսներն անմիջապես անդրադառնում էին նաև կալվածատիրական սեկտորի վրա, ուստի և կալվածատերը, ինչ չափով վոր նա չէր անջատվել ճորտատիրությունից, պետք է կողմորոշվեր նույնպես միայն հասարակ վերարտադրության վրա¹⁾: Սակայն այն հավասարակշռությունը, վորին հենված էր գյուղացիական տնտեսություն մեջ հասարակ վերարտադրությունը, չափազանց անկայուն էր և վորքան մոտենում էր գյուղացիական ռեֆորմը, այնքան նա ավելի և ավելի հաճախ էր խախտվում: Ամեն անգամ հավասարակշռության այդ խախտումն ավելի կամ նվազ զգալի չափով քայքայում էր արդեն գոյություն ունեցող արտադրողական ուժերը, սրում էր դասակարգային հակասությունները և ցնցում էր վորջ սխտեմն իր ամբողջությամբ:

Անբերիությունը ամենից ավելի ցայտուն ցուցանիշն էր հանդիսանում հասարակական արտադրողական ուժերի քայքայմանը: 19-րդ դարի 20—50-ական թվականներին հաջորդաբար կրկնվող անբերրիությունները սովորական յերևույթ էին դարձել, մասնավանդ Սևահողային կենտրոնում և Միջին Վոլգայում: Ամբողջ 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին յերկու տասնամյակում Ռուսաստանում 12 անբերրի տարիներ են յեղել, իսկ 1820—1860 թ. թ. միջի քառասնամյակի ընթացքում անբերրի յեն յեղել 1820, 1833—1835, 1839, 1843—1845, 1850—1851, 1854—1856 թվականները²⁾: 1833-ից մինչև 1845 թվականը 7 տարիներ վատ են յեղել բերքի կողմից ամբողջ Ռուսաստանի համար: Մի քանի նահանգներում անբերրիությունը սխտեմատիկ կերպով կրկնվել է մի քանի տարի անընդհատ. որինակ, Վլատերսկի նահանգում լիակատար անբերրիություն է յեղել 1814 թվից մինչև 1826 թիվը, այսինքն 12 տարի շարունակ, և ապա 3 տարի, 1847-ից

¹⁾ «Սակավանոց կալվածքներում կալվածատերը չափազանցով վոչինչ նոր ծխերին, չի ավելացնում և իր վարը, հեռեպես աշխատանքը և վարձատրությունը մնում են նույնը, բայց ինչպես աշխատանքը, նոյնպես և վարձատրությունը քիչ չափով է ընկնում յուրաքանչյուր ծխի վրա» (Ա. Պ. Ջաբլոցկի-Դեսյատովսկի, «Կոսմո Պ. Դ. Կիսելյովը և նրա ժամանակը», հատ. 4-րդ, էջ 276):

²⁾ Ն. Ոգանովսկի, «Ազրարային եվոլյուցիայի որինաչափությունը», մասն 2-րդ, էջ 247 և Ի. Ի. Իգնատովիչ, «Կալվածատիրական գյուղացիներն ազատության նախորդակին», նջ 8:

մինչև 1850 թիվը նույնպես լիակատար անբերրիության տարիներ են յեղել: Պենդայի նահանգում 1837-ից մինչև 1840 թիվն իրար հետևից յերեք կատարյալ անբերրիություններ են տեղի ունեցել¹⁾:

Անբերրիությունը, անվիճելիորեն հետևանք էր գյուղացիության ճորտատիրական անչափ սանձարձակ շահագործման և այդ հողի վրա (նրա բերրիության) կենտրոնական շրջանները գյուղատնտեսության կատարյալ ուժասպառման, նա ամեն անգամ սոսկալի ժողովրդակա նաղեանք էր բերում: Անբերրիության անխուժեղի ուղեկիցն է յեղել մասսայական սովը: Գյուղացին, վորի հացի բյուջեն միջակ բերքի գեպընմն իսկ չափազանց լարված էր լինում, ընկնում էր կատարելապես անելանելի գրության մեջ նույնիսկ մասնակի վատ բերքի գեպընմ: Հացի սուբրոգատների գործածությունը անդի մեջ, որինակ, մղեղ, թայլ, մամուռ, ծառի կեղև այլն,—ճորտատիրական գյուղում կենցաղային յերեկույթ էր դարձել: Անբերրիության ժամանակ գյուղացին ստիպված էր լինում ուտել իր «հիմնական կապիտալը»—կովին, ձիուն, գյուղատնտեսական ինվենտարը: Կալվածատիրական տընտեսությունն անգոր էր սովի գեմ: Ոգնություն էր հասնում կառավարությունը, վորը միայն յերկու անբերրի տարիներում—1833—1834 և 1839—1840 թ. թ. ծախսել է սոված գյուղացիությանը կերակրելու համար 75,5 միլիոն ուրբի, բայց այդ ոգնությունն էլ պահանջի համեմատությամբ բոլորովին անբավարար էր:

Գյուղացիության անանկացումը մեր վերջրած շրջանում ուներ բոլորովին այլ սոցիալական նշանակություն, քան գյուղատնտեսության կապիտալիստական վերածնության շրջանում: Հողագործության մեջ կապիտալիզմի զարգացման ժամանակ արտադրողական ուժերի մասնավոր քայքայումը, վոր տեղի չէ ունենում գյուղացիական մանր տնտեսության մեջ, հավելումով փոխհատուցվում է այդ ուժերի անհամեմատ մեծ աճումով բուրժուական հողագործական ձեռնարկություններում: Քայքայված գյուղացին անմիջապես դառնում է վարձու բանվոր և այսպիսով իրեն համապատասխան տեղն է գտնում արտադրության սխտե-

1) Պ. Ի. Լյաշչենկո, «Ռուսաստանի ազգային եվոլյուցիայի ուրվագծեր», էջ 127:

մի մեջ: Այլ կերպ էր գործի դրությունը ճորտատիրական գյուղատնտեսության մեջ 19-րդ դարի 20—50-ական թվականներում: Արտադրողական ուժերի կերճանումը գյուղացիական տնտեսության մեջ առաջ էր բերում իր հետ այդ ուժերի կործանումը նաև կալվածատիրական տնտեսության մեջ¹⁾, հանդիսանալով, հետևապես ուղղակի և դժվար ուղղելի վնաս ամբողջ ժողովրդական տնտեսության համար: Քայքայումը դուրս էր վանում գյուղացուն արտադրողական կյանքից առհասարակ և դարձնում էր նրան վոչ թե պրոլետար, այլ պաուպեր:

Գյուղացիական տնտեսության անկումը, սխտեմատիկ անբերրիությունները և մասսայական սովերը գյուղում, բացի բուրբ այլ պատճառներից, հասցնում էր ճորտ բնակչության անմիջական կրճատմանը, այսինքն ճորտատիրական տնտեսության հիմնական արտադրողական ուժի քայքայմանը: Ռուսաստանի ճորտային բնակչությունը 1836 թվին (8-րդ մարդահամար) բաղկացած էր արական սեռի 11365,8 հազար հոգուց, իսկ 1858 թվին (10-րդ մարդահամար) արական սեռի 9802,2 հազար հոգուց. 22 տարվա ընթացքում Ռուսաստանի ճորտ բնակչությունը վոչ միայն չի աճել, այլ նույնիսկ պակասել է 13,8%²⁾ով:

ճորտ բնակչության նվազումը վաղուց էր ուշադրության առարկա դարձել, և ժամանակակիցներն արդեն մի շարք փորձեր էյին արել բացատրելու այն: Յու. Ֆ. Սամարինը կապում էր մահացության բարձրացումը ճորտ գյուղացիների մեջ ճորտատիրական իրավունքի գոյության հետ²⁾: Այդ տեսակետն ավելի վճռականապես զարգացրել է Ն. Բունդեն, վորն ընդգծել է գյուղացիության ճորտատիրական շահագործման աճող ազդեցության

1) Այդպես է յեղել գոնե Սեեդյան կենտրոնում և Միջին Վոլգայում: Ընդհակառակը, բազմաձող ծայրագավառներում նույնիսկ գյուղացիության քայքայման գեպընմ կալվածատիրական տնտեսությունը կարող էր ծաղկել, գառնալով կիսով չափ կապիտալիստական, կիսով չափի պանտատորական ստրկատիրական:

2) «Տ-ին յեզրակացրել է իր գիտողություններից, վոր ճորտ գասի մեջ մահացությունը միշտ ավելի ուժեղ է լինում, քան մյուս դասերում. որինակ, պետական գյուղացիները և կազակների մեջ կլիմայական կատարելապես նույն պայմաններում, միատեսակ վայրում, միատեսակ պարարտույններում, անդի կենսակերպի գեպընմ: Մահացության այդ պլյուսը նա անվանեց ճորտային դրության մահացնող ուժը» (Յու. Ֆ. Սամարին, յերկեր, հատ. 3-րդ, էջ 13):

շնորհիւ¹⁾: Իջել է գյուղացիութեան կենսական մակարդակը Ա. Տրոյնիցիին խոստովանելով, վոր բնակչութեան այդ մասում... «բնական աճման պայմանները գտնվում են նվազ բարեհաջող և ավելի նվազ կանոնավոր դրութեան մեջ, քան պետութեան այլ դասերի մեջ»: «ճորտ դասի ամբողջ անտեսական կենցաղը գտնվում է աննորմալ դրութեան մեջ», սակայն, կարծում է, վոր ճորտ գյուղացիութեան նվազելու գլխավոր պատճառը նորակող գինվորների հափաքներն են²⁾: Տրոյնիցիու տեսակետին համաձայն էր և Ա. Պովալիշինը, վորի կարծիքով ճորտ գյուղացիութեան նվազումն առաջ էր գալիս գլխավորապես ճորտային դրութեանից ուրիշ դասերը փոխանցելու պատճառով³⁾, թեև նրա բերած թվական տվյալները հակասում են դրան: Պ. Ստրուվեյի դիրքն այդ հարցում յեղնում է նրա մայրաքաղաքի գերբնակչութեան տեսութեանից, վորը նա զարգացրել է դեռևս «ճորտատիրական անտեսութեան» «Քննադատական նկատողութեանները» մեջ: մեջ Պ. Ստրուվեն ավելի յե հեռացել մարքսիստական տեսութեանից գերբնակչութեան մասին, քան «Քննադատական նկատողութեանները» մեջ: Նա հրաժարվեց վորևէ կապ տեսնել ճորտատիրական շահագործման աճման և ճորտ բնակչութեան նվազման մեջ⁴⁾:

Ճորտատիրական շահագործութեան անմիջական ազդեցութեանը ճորտ գյուղացիութեան թվի փոփոխութեան վրա այնքան ակնհերև է, փաստերն ինքնին այնքան պարզորոշ են վկայում դրա ոգտին, վոր Ստրուվեյի, Պովալիշինի և ուրիշների բերած

1) Ն. Ոգանովսկի, Նույն աշխատանքը, էջ 240:
 2) Ա. Տրոյնիցի, «Ռուսաստանի ճորտ բնակչութեանը 10-րդ մարդահամարի համաձայն», էջ 55—56, Պետերբուրգ, 1861 թ.:
 3) Ա. Պովալիշին «Ռյազանի կալվածատերերը և նրանց ճորտերը», էջ 3:
 4) «Յեթե յեղել է անգամ գերբնակչութեան հողագործական ճորտատիրական Ռուսաստանում, յեթե դա անգամ խափանում էր բնակչութեան աճումը, պակասեցնելով ամուսնութեան ու ծնունդը և բարձրացնելով մահացութեանը, ապա այդ փաստերը կապ չեն ունեցել ճորտատիրական իրավունքի փաստի և գրանից յեղնող կալվածատիրական իրավունքի ծավալի հետ, այլ վորոշվում է յին ավելի ևս որևէ կողմ և հիմնական ընդթ կրող գործոնով. հողատիրութեան ներկա բաշխման և ներկա գյուղատնտեսական սննդի հրապարակի տեսնելու յեղնող կողմի վրա էր թեթևումը» (Պ. Ստրուվե, «Ճորտատիրական անտեսութեանը», էջ 144, ընդգծումը հեղինակինն է—Պ. Գ.):

փաստարկումներն է պաշտպանութեան հակառակ տեսակետի վոչ մի քննադատութեան չեն դիմանում: Իսկապես, այն ժամանակ, յերբ ճորտ գյուղացիութեանը մարդահամարից մարդահամար (ռեվիզիայից ռեվիզիա) պակասում էր իր թվով, Ռուսաստանի վոչ ճորտ բնակչութեանը բավականին արագորեն աճում էր¹⁾: Ճորտ բնակչութեան նվազումը և վոչ-ճորտ բնակչութեան աճը հիմնականում տեղի է յին ունենում վոչ թե ի հաշիվ մի դասից մի այլ դասին անցնելուց, այլ բնական աճման նվազման հաշիվին: Ճորտ գյուղացիների այլ դասեր անցնելը տեղի յեր ունենում աննշան չափով և չեր կարող է յական ազդեցութեան ունենալ ճորտերի քանակի փոփոխութեան վրա: Զինվորակոչի դերը նույնպես ճորտերի նվազման գործում մեծ չէր. չէ վոր զորակոչային պարհակն ընկած էր նաև պետական գյուղացիների վրա, այնինչ պետական գյուղացիների արական սեռի թիվը 1836 թ. (8-րդ մարդահամար) ավելացել է 8915,5 հազար հոգուց մինչև 10,614,4 հոգու 1858 թվին (10-րդ մարդահամար): Ճորտ գյուղացիների սակավահոգութեանը պետական գյուղացիների համեմատութեամբ, վոր մասնանշում է Պ. Ստրուվեն և ազատ աշխատանքային ժամանակը, վորը մնում է իր հողաբաժինը մշակելուց հետո, իր ոգտին աշխատանքի գործադրելու հնարավորութեան բացակայութեանը, վոր Ստրուվեն չի մատնանշում, վորպես ճորտ բնակչութեան նվազման գործոններ չեն յեղել «ճորտատիրական կարգի հետ վոչ մի կապ չունեցող» մի ինչ-վոր բան, այլ հանդիսացել են անմիջական արդյունք կալվածատիրական անտեսութեան զարգացման՝ ի հաշիվ գյուղացիական հողագործման և գյուղացիական աշխատանքային ժամանակի:

Գյուղացիական անտեսութեան արտադրողական ուժերի քայքայումը, կանոնավորապես կրկնվող անբերրիութեանները, գյուղացիութեան աղքատացումը, ճորտ բնակչութեան նվազումը և այլն, ճորտատիրական անտեսութեան սխտեմի դուալիստական հիմունքի պատճառով միևնույնը չեյին կալվածատիրական տըն-

1) Նիկոլայ 1-ինի ամբողջ թագավորութեան ընթացքում (1825—1855 թ.թ.) ըստ որևէքի ազատ յերկրագործների մասին՝ ազատ են թողված 67,149 հոգի պրական սեռի ճորտ գյուղացիներ (Վ. Ի. Սեմենկի, «Գյուղացիական հարցը Ռուսաստանում 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կիսում», հատ. 2-րդ, էջ 210): Գյուղացիական բուրժուազիայի փրկանքով ազատութեան ձեռք բերելու դեպքերը յեղակի յեն տեղի ունեցել:

տեսութեան համար: Կարվածատիրոջ համար հողագործական գերբնակված նահանգներում տարեցտարի ավելի և ավելի դժվար եր դառնում պահպանել իր անտեսութեանը թեկուզ հասարակ վերարտադրութեան մակարդակի վրա: Ամենից առաջ կարվածատիրական անտեսութեանը չափազանց զգալի յեր կոռալին աշխատանքի վորակի սխտեմատիկ ցածրացումը: Կոռալին անտեսութեանը հարկավոր եր վոչ թե պառուկեր, այլ ամուր գյուղացի-անտեսատեր, վորն ունենար լավ ձի և կանոնավոր ինվենտար: Գյուղացիների սակավածութեան ավելանալու, բավարար չափով ֆուրածի բացակայութեան, շնորհիվ ճորտատիրական պայմաններում կարվածատիրոջ դժվար եր սեփական բանող անասուն ձեռք բերել և կարվածատիրոջ համար ավելի և ավելի դժվար եր: դարձնում պահպանել հերկն առաջվա քանակով և վաճառելու համար հաց մատակարարել հեռավոր շուկաներին: Գյուղացիական ծխի գրութեանը 30—40-ական թվականներում դարձել եր ճորտատիրական անտեսութեան ամենահիվանդոտ հարցը: Գյուղացիներին աղքատութեանից ազատելու համար կարվածատերն ստիպված եր ավելի մեծ չափով միջամտելու գյուղացիական անտեսութեան ներքին կյանքին, նա պահանջում եր գյուղացիներից, վոր նրանք ժամանակին ցանեն իրենց ամբողջ հողաբաժինը և լավ մշակեն այն, արգելում եր մեջգյուղացիական վարձակալութեանն ու վարձավորութեանը, հաճախ խլում եր գյուղացիներին հավաքած հացը և տանում իր սեփական շտեմարանը և կարգավորում եր այդ հացի գործածութեանը, հետևում եր, թե ինչպես են կերակրում գյուղացիներն իրենց անասուններին և այլն և այլն¹⁾:

Գյուղատնտեսական գրականութեան մեջ առաջարկում եյին բոլոր հնարավոր ծրագրներ գյուղացիական ծխի վերակառուցման մասին՝ նրա ամբողջման նպատակով (որինակ՝ Վելկինսի հայտնի նախագիծը գյուղացիական խառն ընտանիքներ ստեղծելու մասին): Առանձին կարվածատերեր նույնիսկ կրճատում եյին իրենց հերկը և լայնացնում գյուղացիականը, վորպեսզի ավելացնեն գյուղացիների բարեկեցութեանը և դրանով բարեկալին կոռալին

¹⁾ Յու. Ֆ. Սամարին, յերկեր, հատ. 2, էջ 52—54. Ա. Պովալիշին, «Ռյազանի կարվածատերերը և նրանց ճորտերը», էջ 49:

աշխատանքի վորակը¹⁾: Կարվածատիրոջը մեծ մասամբ չեր հաջողվում հաստատուն արդյունքներ ստանալ գյուղացիների արնտեսական կյանքի մանր միջամտութեան ճանապարհով, բայց այդ միջամտութեան շնորհիվ ճորտատիրութեան իրավունքի ճնշումն ուժեղանում եր և դրա հետ միասին աճում եր գյուղացու ատելութեանը կարվածատիրոջ վերաբերմամբ:

Գյուղացիական ծխի թուլացումը և գյուղացիների աղքատացումը նաև գուտ վնասներ եյին հասցնում կարվածատիրոջը: Անբերրի տարիներում և սովի ժամանակ կարվածատերը պարտավոր եր կերակրել իր գյուղացիներին՝ վոչ միայն որենքի ուժով, այլև անտեսական անհրաժեշտութեանից ստիպված²⁾: Անբերրի տարիներում, վորոնք, ինչպես մենք տեսանք վերը, ավելի և ավելի հաճախ եյին կրկնվում, կարվածատերը, վոչ մի յեկամուտ չստանալով իր կարվածքից, ծախսում եր ճորտերի պարենավորման վրա յերբեմն շատ խոշոր գուժարներ և ավելացնում եր իր պարտքը: Այն կարվածքը, վորտեղ պատահում եր անբերրութեան, սովորաբար դադարում եր մի քանի տարվա ընթացքում յեկամուտ տալուց: Ճորտերի հողաը և նրանց գոյութեան միջոցները մինի-մուսի ապահովութեանը, վոր մի ժամանակ բոլորովին զգալի չեր, այն չափով, վոր չափով վոր աճում և սպառնալից ծավալ եր ստանում գյուղացիների սնանկացումը, դառնում եր չափազանց ծանր և սկսում եր նեղել կարվածատերերին: 30—40-ական թվականների գրականութեան մեջ ավելի և ավելի յեն գանգատներ լսվում այդ պարտականութեան

¹⁾ Ն. Ա. Ռոժկով, «Ռուսաց պատմութեանը պատմական համեմատական լուսաբանութեամբ», հատ. 10-րդ, էջ 178—180, 282—283:

²⁾ «Որոնքը պարտավորեցնում և կարվածատիրոջը կերակրելու գյուղացիներին կարելի չեպքում: Բայց այդ պարտականութեանը միշտ ել չի կատարվում. դրա ապացույց ե 1839 թիվը, յերբ շատ կարվածատերեր փախել եյին իրենց գյուղերից... Յեղել են, ընդհակառակը, այնպիսիները, վորոնք վերջին միջոցները կերակրել են գյուղացիներին, թեև, կարող և պատահել ըստիպված են յեղել անելու այդ ավելի շատ հաշվներով առաջնորդվելով, քան մարդասիրութեանից, բայց այսպես թե այնպես, յեղել են կարվածատերեր, վորոնք ծախել են թանգարժեք իրերը, գրավ են դրել կարվածքները մուժիկներին կերակրելու համար և վերջին տարիներում ծախսել են դրա վրա մի քանի տարվա մեջ ամբարած պահեստները, վորոնք սովի տարում բարձր արժեք ունեյին»: (Ա. Պ. Չաբլոցկի-Գեյսաուվսկի, «Կոմս Պ. Դ. Կիսելցովը և իրա ժամանակը», հատ. 4-րդ, էջ 318):

քայքայիչ լինելու մասին¹⁾: Այսպիսով ճորտատիրական տնտեսական սխտեմի հիմնական առանձնահատկությունը — ամուր կապը կարվածատիրական և գյուղացիական տնտեսությունների մեջ — սկսում է նկատելի կերպով դառնալ դեպի կարվածատերն. իր բացասական կողմով:

Սակավահողությունը և գյուղացիներին հողաբաժիններ տալու անհրաժեշտությունը հասցրին այնպիսի, վոր ճորտ գյուղացու անձնավորությունը կոռային տնտեսություն շրջաններում սկսեց գնահատվել ավելի և ավելի եփան: 19-րդ դարի կիսին Մեհողային կենտրոնում ճորտի միջին գինն էր 20,4 ուլբլի, մինչև 18-րդ դարի 90-ական թվականներին նրա գինը հասնում էր մինչև 200 ուլբլու²⁾: Միևնույն ժամանակ հողի գները շատ խոշոր չափով բարձրացան, այնպես վոր Բեֆորմի նախորդակին գերբնկաված կոռային նահանգներում գների ասարբերությունը բնակելի և անբնակ հողերի մեջ շատ էլ մեծ չեր: Յարտուրալի նահանգում նա հավասար էր 48⁰/₀-ի, Կոստրոմայի նահանգում՝ 52⁰/₀-ի, Տուլայի նահանգում՝ 11⁰/₀, Վորոնեժի նահանգում՝ 6⁰/₀-ի, Կուբակի նահանգում՝ 5⁰/₀-ի³⁾: Իրա հետ միասին յեղել են շղեպքեր, վո-

1) Ի. Ի. Իգնատովիչ, «Կարվածատիրական գյուղացիներն ազատության նախորդակին», էջ 25, Վ. Ի. Սիմսկի, «Գյուղացիական հարցը 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կիսում», մասն 2-րդ, էջ 615—616: Հետաքրքրական է այդ կողմից Պենզայի կարվածատեր Սելիվանովի դործը: Լինելով լեբնրու, հակառակորդ ճորտատիրական իրավունքի և Կ. Ի. Կավելինին բարեկամ, Սելիվանովը 40-ական թվականների վերջում պայման է կապում իր գյուղացիների հետ, վորի համաձայն կոռային հերկը վոչնչանում է և ամբողջ հողը (1200 դեսյատին 250 հոգում) արվում է գյուղացիներին վորոշ հողատուրքային դումարով, ըստ վորում կարվածատերն իրավունք չունեն բարձրացնելու այդ տուրքը: Դրանից հետո նա ծախում է պահեստի բոլոր հացը և դնում է Փարեյի բայց շուտով ստիպված է լինում վերադառնալ, վորովհետև գյուղացիներն անբերրիության պատճառով հրաժարվել էյին վճարել տուրքը: Չունենալով վոչ փող և վոչ էլ հաց, Սելիվանովը վոչնչով չէր կարող ոգնել գյուղացիներին: Նա նամակ է գրում Կավելինին, վորտեղ դանդաղում է ճորտատիրոջ ծանր գրությունից: Այդ նամակն ընկնում է նահանգապետի ձեռքը և Սելիվանովն ընկնում է 3-րդ բաժանմուտք (տոս Վ. Ի. Սիմսկի, «Գյուղացիական հարցը 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կիսում», էջ 348 և 472—473):

2) Ն. Ուանոպսկի, «Ագրարային եվոլյուցիայի օրինաչափությունը», մասն 2-րդ, էջ 373:

3) Վ. Ի. Պոչետա, Ռուսաստանի ժողովրդական տնտեսության պատմությունը 19-20-րդ դարերում», էջ 109:

րոնց վրա մատնանշել են 50-ական թվականների արոլլիցիոնիստները (ստրկամարտիկները), յերբ բնակվածությունը վոչ միայն չէ ավելացրել հողի արժեքը, այլ նույնիսկ իջեցրել է¹⁾:

Հողի գների անընդհատ աճումը և միաժամանակ ճորտի գնի անկումը պարզորեն ցույց են տալիս, վոր ճորտատիրական իրավունքը²⁾ սակավահող կոռային նահանգներում սկսել է կորցնել կարվածատիրոջ համար իր նշանակությունը:

Այսպիսով կոռային սխտեմի յուրատեսակ «ճգնաժամը» սեհողյան կենտրոնում, վոր առաջացել էր գյուղացիություն ճորտատիրական գերնագեցված շահագործման հողի վրա և վորի անմիջական հետևանքն էր հասարակական արտադրողական ուժերի մասնակի քայքայումը, հասցրել էր կարվածատիրական ճորտատիրական տնտեսությունը մինչև փակուղի, վորտեղից ճորտատիրություն սահմաններում յեղք չկար: Համեմատական ագրարային գերբնակչության առկայությունը դարձրել էր վորոշ չափով ավելորդ արտատնտեսական հարկադրանքի պահպանություն իր մաքուր ձևով, վորովհետև սակավահողության դեպքում գյուղացին առանց ճորտատիրական իրավունքի էլ ստիպված էր տնտեսական անհրաժեշտություն ուժով չխղել կապն իր և կարվածատիրական տնտեսությունների մեջ և տալ կարվածատիրոջ ստրկացնող պայմաններով իր աշխատանքային ուժը և իր լինվենտարը, այսինքն նախավոր էր դառնում աշխատավճարի սխտեմի գոյությունը:

1) «Հացառատ կարվածք անելու ժամանակ մենք առանձին ուշադրություն ենք դարձնում հողի քանակին ու վորակին և մեծ մասամբ հողին ավելի բարձր գին ենք տալիս, վորքան վոր քիչ ճորտեր ունի այդ հողը, հետեվաբար մարդիկ այդ դեպքում մի այնպիսի առարկա չեն ներկայացնում, վորն ինքնին արժեք ունենար»: (Ս. Ի. Կոչելյով, «Գրություններ», հավելված էջ 124—125): «Ամեն տարի մենք լսում ենք Տուլայի և Ռյազանի նահանգներում, վոր փոքր կարվածքներ ծախողները պահանջում են դեսյատինին բարձր գին, յերբ հողը ծախվում է առանց նրան կցած մարդկանց (այսինքն ծախողը պարտավորվում է նախապես գյուղացիներին ծախել-հեռացնել), և զիջում են գնից, յեթև առնողը վերջնում է հողը նրա վրա բնակություն հաստատած գյուղացիների հետ միասին» (Յու. Ֆ. Սամարին, յերկեր, հատ. 2-րդ, էջ 175—176: Տես նաև Կոկորեի ճառի հայտնի կտորը՝ նրա կողմից անբնակ հող տնելու և բնակեցրած հող տնելուց ճորտարկելու մասին, Բարսեղով, Վ. Պ. Պոպովինի կյանքն ու աշխատությունները», հատ. 4-րդ, էջ 488—490):

2) Բայց վոչ անստույգ ճորտատիրության սխտեմը. դրան կարվածքատերն ամուր էր կառչած և մինչև 1861 թվի Բեֆորմը և Բեֆորմից հետո

(«Բայց անա ներս ե խուժում ապրանքային տնտեսությունը,—գրել ե Լենինը,—կարվածատերն սկում ե արտադրել հաց վաճառելու, այլ վոչ թե իր համար: Դա առաջ ե բերում գյուղացիների աշխատանքի շահագործման ուժեղացում,—այնուհետև կարվածատիրոջ համար այլևս ձեռնտու չե գյուղացիների աճող սերունդներին տալ նոր հողաբաժիններ և յերևան ե դալիս փողով վճարելու հնարավորությունը: Դառնում ե ավելի հարմար միանգամ ընդմիջտ սահմանադատել գյուղացիական հողը կարվածատիրականից (մասնավանդ յեթե կարեն այդ դեպքում հողաբաժինների մի մասը և ստանան «արդար» փրկանք) և ոգտվել մի և ն ու յն գյուղացիների աշխատանքից, վորոնք դրված եյին նյութապես ավելի վատ պայմանների մեջ և ստիպված եյին մրցել և՛ նախկին սպասավորների, և՛ «ընծայագրվածներին» հետ և ավելի ապահովված նախկին պետական և ուղելային գյուղացիների հետ և այլն¹⁾»:

Կամաց-կամաց ճորտատիրական իրավունքի վերացման մեջ կարվածատերն սկսում ե տեսնել ավելի շատ գրավիչ կողմեր. կարելի յեր ազատվել ճորտերին սովի ժամանակ կերակրելու ծանրաբեռնիչ անհրաժեշտությունից, նոր կազմվող ընտանիքներին հողաբաժիններ տալուց և այլն:

30—40-ական թվականների անբերրիությունները հանդիսացան այն անմիջական խթանը, վորի ազդեցության տակ կարվածատերերի մեջ սկսվեց շարժում հոգուտ ուեֆորմի: Ժամանակակիցները շատ լավ տեսնում եյին անբերության և այդ շարժման մեջ գոյություն ունեցող կապը: Դրա մասին շատ պարզ գրել են Ա. Պ. Չարլոցկի-Իեսյատովսկին²⁾, Նիկոլայ 1-նի ներքին

¹⁾ Լենին, Յերկեր, հատ. 1-ին, էջ 350:

²⁾ «Չի կարելի չկատարել, վոր ճորտատիրական իրավունքի փոփոխության հարցը, վոր մի քանի տարի սրանից առաջ վայրենի յեր թվում, այժմ վոչ վորի չեր գարմացնում: Ամենքն ել պատրաստ են այս կամ այն կերպ խորհելու նրա մասին: Այն բանից հետո, յերբ 1837 կամ 1838 թվին Տուրայի ազնվականներից մի քանիսի խելքին փչեց «կազմել ճբադիր գյուղացիներին ազատելու մասին, այդ ճբադիրներն Մասլոյայի անչիտիան կուբում անեծ ք մասնեցին: Բայց յերբ յեկան սովի տարիները, կարվածատերերը տեսան ամբողջ դժբախտությունը,—այն ժամանակից ուեսկիտ կատարվեց. սկսեցին մտածել, վոր լավ կլինի նաև ազատել գյուղացիներին» (Ա. Պ. Չարլոցկի-Իեսյատովսկի, «Կոմս Պ. Ի. Կիսելյովը և նրա ժամանակը», հատ. 4-րդ էջ 342):

գործերի մինիստր Պերովսկին¹⁾, վորը շատ հեռու յեր գյուղացիական հարցում լիբերալ լինելուց և ուրիշները:

Գյուղատնտեսությունն ապրանքային արտադրությանն անցնելուց հետո, նրա առաջ ծառայան բազմաթիվ նոր հարցեր, վորոնք ծանոթ չեյին ֆեոդալական գյուղատնտեսությանը և վորոնց մեջ առաջին տեղերից մեկը բռնում եր կապիտալի կուտակման խնդիրը: Իսկապես, անցնելով հացի արտադրությանը վաճառելու համար, կարվածատերը պետք ե անդադար լայնացներ և վերակառուցներ իր տնտեսությունը թեկուզ շուկայի աճման համընթաց: Այն հնարավորությունները, վոր նրան, վորպես ճորտատիրոջ, տալիս եր այդ կողմից մանր գյուղացիական տնտեսությունը, չափազանց սահմանափակ եյին: Նույնիսկ հենվելով կոռային սխառեմին՝ դրա ամենավանդական ձևի մեջ, այսուամենայնիվ հարկավոր եր ծախսել վորոշ միջոցներ կարվածատիրական տնտեսությունը սարքավորելու և պատշաճ դրության մեջ պահելու համար: Պահանջվում եյին, որինակ, տնտեսական շինություններ, յեղջուրավոր անասուններ և այլն: Ռժանդակ ձեռնարկությունների ստեղծելը վարելահողի մոտ խոստանում եր կարվածատիրոջ յեկամուտների բավականաչափ ավելացում և դա ստիպում եր նրան կառուցել ողեգործական կամ ճակնդեղաշաքարային գործարան, շրագաց, ձավարաղաց, ձեռք բերել նրբադեղմ վոչխարներ, պարապել ձիաբուծությամբ և այլն և այլն: Երջանառու միջոցներ հարկավոր եյին նաև նրա համար, վորպեսզի արտադրած ապրանքների իրացման ժամանակ կարելի լինի ազատորեն գործառել շուկայում, մաքսիմալ կերպով ոգտագործելով շուկայի կոնյունկտուրայի

¹⁾ «Կարվածատերներն իրենք սկսեցին հասկանալ վոր գյուղացիները բեռն են նրանց համար և վոր ցանկալի յեր փոխել այդ յերկուստեք անձեռնտու հարաբերությունները: Կամաց-կամաց այդ դրությանը հասցրին հողի բարձրացող գինը և նրա պակասությունը, գյուղացիական պարտականությունների անորոշությունը և այդպիսի գեպրելում իր հաշվին գյուղացիներին կերակրելու ծանր պարտականությունը, գյուղացու անհոգությունը, վորը պատկանելով կարվածատիրոջը և ստիպած լինելով տեսնել նրա մեջ իր հողաբարձուն, լինը իր մասն չեր հոգում» (Պերովսկու Նիկոլայ 1-նի ներկայացրած գրությունից 1845 թվին: Բաղում ենք Վ. Ի. Սեմևկու գրքից՝ «Գյուղացիական հարցը 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսում», հատ. 2-րդ էջ 615):

տասանուները: Վերջապես ավելի և ավելի յեր անհրաժեշտ դառնում ամբողջովին կամ մասամբ գույքավորել զուս հողագործական արտադրությունը, վորովհետև գյուղացիական ինվենտարը դադարել էր աճող ձեռնարկությունների պահանջները լրացնելուց: Այդ բոլորի համար պահանջվում էլին անդադար ավելացող զրամական գումարներ, վորոնք չեյին կարող վերցվել սպառողական նպատակների համար առանց վնաս տալու արտադրությանը:

Մինչդեռ «պատմության կամքով» գյուղատնտեսության գլուխ գրված էր մի դասակարգ, վորի ուժերից վեր էր կուտակման խնդիրը: 19-րդ դարում ուսական ազնվականությունը գալիս է ֆեոդալական «սպառողական» հոգեբանությամբ, վորը լիովին համապատասխանում էր արտադրության և յուրացման զուտ ֆեոդալական յեղանակին: Ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը վոչ միայն չէր վոչնչացրել դասակարգի հոգեբանության սպառողական գծերը, դասակարգի, վորը կանգնած էր գյուղատնտեսության գլուխ, այլ նույնիսկ ուժեղացրել էր այդ գծերը, վորովհետև շուկայի աճումը, կյանքը մեծ քաղաքներում, սերտ կապը կապիտալիստական Արևմուտքի հետ, կուլտուրական առաջադիմությունը և այլն 19-րդ դարի առաջին կիսում ազնվականի մեջ ստեղծել էլին այնպեսի պահանջներ, վորոնք բոլորովին անհայտ են յեղել նրա նախորդին և վորոնք պահանջում էլին ճորտատիրական տնտեսության հնարավորություններից շատ բարձր միջոցներ: Դրա արդյունքը յեղավ ազնվականության հակայական և անդադար մեծացող պարտքն այն ժամանակ, յերը գյուղատնտեսության մեջ կատարվում էլին կապիտալի անբավարար ներգրումներ արտադրության համար: Այդ պարտաբեռնավածությունն արգելակում էր արտադրողական ուժերի զարգացմանը և վերջ իվերջո ճորտատիրական հարաբերությունների ամբողջ սխտեմը դնում էր սնանկության վտանգի առաջ:

Ազնվականության պարտքի չափերի և նրա աճման թափի մասին կարելի յե դատել հետևյալ թվերից: 1800 թվին ազնվականները գրավ էլին դրել 161,7 հազար ճորտ, 1833 թվին—3849,3 հազար, 1852 թվին—5843,7 հազար և 1889 թվին—7107,2 հազար: Այսպիսով 1861 թվի սեփորմի նախորդակին ճորտերի 70%-ից

ավելին գրավ էր դրված: Խողսկու հաշվով գրավ դրված կալվածքում միջին հաշվով յուրաքանչյուր ճորտին գալիս էր 69-ական ուլբի պարտք¹⁾, այսինքն ազնվականների պարտքի ընդհանուր գումարը հասնում էր համարյա 500 միլիոն ուլբուլ²⁾: Ռուսաստանի բոլոր ճորտ բնակչությունն իր հողաբաժիններով 50-ական թվականները գներով արժեք մոտավորապես մի միլիարդ ուլբուլ, հետևապես պարտքը կազմում էր ազնվականության «հիֆնական կապիտալի» 50%-ը: Տոկոսների վճարումը վարկային հաստատություններին, վոր անազին գումարներ էր կլանում, ավելի ամուր էր ձգում թոկն ազնվականության վզից: Տարեցտարի ազնվականությունն ավելի և ավելի անհույս պարտապան էր դառնում և անշեղ մտեհնում էր սնանկությանը:

Ի՞նչ նպատակների համար էր ազնվականությունը դիմում վարձի և ծանրաբեռնում պարտքերով իր կալվածքները: Պ. Բ. Ստրուվին իրեն հատուկ ուշադրություն էր դարձնում «Որչեկտիվիզմին» հաճապատասխան, վորի նպատակն էր քողարկել ավյալ սխտեմի ներքին հակասությունները և վորի գրքի հիֆնական խնդիրն էր—պարտքերը ճորտատիրության կենսունակությունը սեփորմի նախորդակին,—գտնում էր, վոր ազնվականության վարկը 19-րդ դարի առաջին կիսում կրում էր արտադրողական բնույթ, վոր պարտքը «ծանր քար» չէր հողատերերի համար, վոր «պարտքեր արվում էլին յեկամուտ բերող և իր արժեքով բարձրացող հողեր գներու համար, կամ տնտեսությունը բարեկարգելու համար³⁾»: Ի պաշտպանություն իր թեզի Պ. Բ. Ստրուվին ուրիշ վոչինչ չի բերում բացի կոուային սխտեմի հայտնի ջատագով Ի. Սարուրովի «Պենդայի հողագործի» քաղվածքներից, վորտեղ հեղինակը գրում է, վոր մի քանի կալվածատերեր սեհողյան գոտում պարտքով գներով կալվածքներ հարստացել են շնորհիվ հողի գների

1) Վ. Բ. Սեմևսկի, «Գյուղացիական հարցը 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կիսում», հատ. 2-րդ, էջ 617:

2) Ա. Ի. Կոչեյովի ավյալների համաձայն առ 1 հունվարի 1856 թ. յերկու անգամ ավելի գումար է տրված յեղել փոխառությամբ ազնվականների կալվածքների գրավի դիմաց. խնամակալական խորհուրդների կողմից 518 միլիոն ուլբուլ, պետական փոխառության բանկից—398 միլիոն և հաշարակական խնամածության հրամաններով—104 միլիոն («Գրություններ», հավելվածներ, էջ 136):

3) Պ. Բ. Ստրուվե, «Ճորտատիրական տնտեսությունը», էջ 146:

բարձրացման և թղթադրամների կուրսի անկման¹⁾: Մ. Ն. Պոկրովսկին նույնպես հակված է ազնվականական վարկին վերագրելու արտադրողական բնույթ: Վորպես ապացույց դրան, նա վկայութեան է կանչում կարլաժատերերի պարտքի մեծութունը 1833—1859 թ. թ., յերբ, նրա կարծիքով, գյուղատնտեսական կոնյուկտուրան ցույց էր տալիս բարձրանալու հակում, և հետևապես, պետք է բարձրանային նաև կարլաժատերերի յեկամուտները:

Պ. Բ. Ստրուվեյի և Մ. Ն. Պոկրովսկու ազնվականական պարտքի նկատմամբ տեսակետի հետ վոչ մի կերպ չի կարելի համաձայնվել: Ժամանակակիցների բազմաթիվ վկայութունները և անվիճելի փաստերը վճռականապես խոսում են նրա դեմ, իսկ նրա ոգտին բերված փաստարկումները բոլորովին բավարար չեն: Իհարկե, յեղել են առանձին կարլաժատերեր, վորոնք զիմել են փոխառութեան արտադրողական նպատակների համար, բայց պետք է դատել վոչ թե նրանցով, այլ կարլաժատերական ամբողջ մասսայով:

Մնում է չհերքված ժամանակակիցների կողմից անհամար անգամ վկայված այն փաստը, թե կարլաժատերով պահանջներն աճում էին ավելի արագ, քան նրա ճորտերից ստացվող յեկամուտները: Դրան հրաշալի ապացույց կարող է ծառայել Պուշկինի նամակագրութունը, վորին դիմում է Մ. Ն. Պոկրովսկին: Կարող են ասել, վոր Պուշկինի նամակագրութունն այդ կողմից արկիական չէ, վորովհետև նա գտնվում էր իրենից ավելի խոշոր կարլաժատերերի շրջանում: Բայց գուրս է գալիս, վոր շարքային կարլաժատերերն էլ նույնն էին անում, ինչ վոր Պուշկինն էր անում. «կարլաժատերը, վորն ունի 200-ից մինչև 1000 ճորտ. ցանկանում է ապրել վոչ վատ նրանից, ով վոր ունի 10,000 ճորտ. նա, ով ունի հարյուրից ավելի, աշխատում է նմանվել նրան. 20-ից մինչև 100 հոգի ունեցողները չեն ցանկանում հետ մնալ իրենց կենսակերպի մեջ 100 հոգուց ավելի ունեցողներին²⁾»:

¹⁾ Նույն տեղը, էջ 147:

²⁾ Շելևգով, «Խոհեր գյուղատնտեսութեան կառարելագործման մասին» (բաղում ենք Պովալիշինի «Ռյազանի կարլաժատերերը և նրանց ճորտերը» գրքից, էջ 86):

Կարլաժատերերի հսկայական պարտքերն ամենափոքր չափով չէին համապատասխանում գյուղատնտեսութեան մեջ, կարլաժատերի արտադրողական ներդրմանը վոր գոյութուն ուներ իրականում¹⁾: Բահրային կարլաժատերի տերերը, վորոնք, վորպես կանոն, վոչ մի տնտեսութուն չէին վարում, այլ զուտ սնանոյններ էլին, պարտքեր էլին անում համարյա այնպես, ինչպես և կուսային կարլաժատերի տերերը: Որինակ, Յարոսլավի նահանգում, վորտեղ ճորտ գյուղացիների 87⁰/₀-ը հողատուրք էր վճարում: «Կա ներկայումս միայն 9 գրավ չղրված կարլաժատերական կարլաժատ: Յերբ ավերացրին 15-ական ուրբի ամեն մի հոգուն, բոլոր կարլաժատերերն էլ վրա պրծան այդ չնչին գուժարին²⁾»: Պարտքի ամենամեծ տոկոսը, ինչպես յերևում է Մ. Ն. Պոկրովսկու բերած աղյուսակից, տալիս են կենտրոնական սեհողային նահանգները՝ Որյոլի, Պենդայի, Տուրայի, Ռյազանի, Տամբովի նահանգները³⁾, վորտեղ կուսային տնտեսութունը տարվում էր ամենահետընկած ձևով և վորտեղ կարլաժատերերի ճնշող մեծամասնութունն ընդհուպ մինչև ունեցողները համարյա չէ ունեցել սեփական ինվենտար:

Վերջապես պարտքի աճումը 1833—1859 թ. թ. վոչ միայն չի հերքում, այլ ավելի էս հաստատում է մեր տեսակետի ճշտութունը: Հացի գների բարձրացումն այդ տարիներում այնքան զգալի չի յեղել, վոր շատ էյական կերպով կարողանար ազդել կարլաժատերական կարլաժատերի յեկամուտերութեան փոփոխութեան վրա, այնինչ այդ շրջանի վրա յե ընկնում անբերիութունների մաքսիմալ թիվը: Յերբ կարլաժատերերը վոչ մի յեկամուտ չէին ստանում և կամա-ակամա պետք է անձնական գործածութեան նպատակների համար փող վերցնեյին վարկային հիմնարկներց:

¹⁾ «Փոխառութեան բանկերն ազնվականութեան համար ամենաչնչին չափով չբարելավեցին վոչ հողագործութունը, վոչ արդյունաբերութունը կարլաժատերական կարլաժատերում, այլ միայն նպատակեցին անհաշիվ շտալութեան և ազնվականութեան անվճարելի պարտքերի տարածման» (Ա. Պ. Ջարլոցկի-Դեսյատովսկի, «Կոմս Պ. Դ. Կիսելյովը և նրա ժամանակը». հատ. 4-րդ, էջ 330—331):

²⁾ Ա. Պ. Ջարլոցկի-Դեսյատովսկի, նույն տեղը, էջ 331:

³⁾ Մ. Ն. Պոկրովսկին բոլորովին սխալ է ընդգծում, վոր հենց այդ նահանգներում «միջազգային շուկայի պահանջների ուժով կարլաժատերի և ավելի էր դառնում հացի գործարան»: Հիշած նահանգներում կարլաժատերական կարլաժատերը վոչ մինչև ունեցող և վոչ էլ նրանից հետո չի յեղել հացի գործարան միջազգային շուկայի համար:

Այսպես ուրեմն, մենք հիմնական զծերով պարզեցինք ճորտատիրական հարաբերությունների քայքայման պրոցեսի տրտեսական բովանդակությունը Ռուսաստանի գյուղատնտեսության մեջ 19-րդ դարի առաջին կեսում: Իրանով մենք սահմանափակում ենք մեր հոգվածի բովանդակությունը: Համառոտ կերպով տանք հանրագումարը:

Մեր գյուղաբերության զարգացումը և աշխատանքի նրա-կական բաժանման աճումը հասցրին այն բանին, վոր ճորտատիրական Ռուսաստանում 19-րդ դարի առաջին կեսին կազմվեց բավականին ընդարձակ ներքին շուկա գյուղատնտեսության արտադրանքների համար: Իրա հետ միասին արագորեն աճեց նույնպես և արտաքին շուկան, բայց ներքին շուկայի համեմատությամբ նա յերկրորդական նշանակություն ուներ: Ճորտատեր-թյամբ նա յերկրորդական նշանակություն ուներ: Ճորտատեր-թյամբ նա յերկրորդական նշանակություն ուներ: Զգտելով ստանալ իր կարվածքից վորքան կարելի յե շատ յեկամուա, նա լայնացնում և վարելահողը և սաստկացնում և մինչև ծայրահեղ աստիճան գյուղացիության ճորտատիրական շահագործումը: Գյուղացիական տնտեսությունը, վորը հանդիսանում էր ճորտատիրության արտադրական հիմքը, չի գիմանում այդ շահագործմանը և կամաց-կամաց գնում և դեպի անկում: Գյուղացիության մասայական սնանկացումը խախտում և կարվածատիրոջ կողային տնտեսությունը, վորը կանգուն էր գյուղացիական աշխատանքով և գյուղացիական ինվենտարով: Գյուղատնտեսության սեջ մասնակի կերպով տեղի յե ունենում արտադրողական ուժերի անմիջական ավերումն: Կարվածատիրական տնտեսությունն ընկնում և փակուղու մեջ, ճորտատիրական հարաբերությունների ամբողջ սխտեմը մտնում և իր նեխման և քայքայման շրջանը:

Մակայն ճորտատիրական տնտեսության քայքայումը չհասցրեց և չէր կարող հասցնել ճորտատիրական սխտեմի անմիջական անկման: Չնայած այն հանգամանքին, վոր ճորտատիրական կարգը, դեռևս 19-րդ դարի կեսում արդեն փտել էր մինչև իր հիմքը, չէր կարող «ընկնել» ինքն իրեն, ավտոմատիկ կերպով, ն հարկավոր էր «զլորել»: Ճորտատիրական կարգի անկումը կ

ևր կատարվել միայն դասակարգային պայքարի հետևանքով, միայն այնպիսի սոցիալական ուժի առկայությամբ, վորն ընդունակ լիներ կտարել կամ գոնե թեքել տիրող հին դասակարգը: և նրա ստեղծած պետական իշխանությունը:

Ճորտատիրական տնտեսության քայքայումը հանդիսանում է ճորտատիրական կարգի անկման նախադրյալն այն տեսակետից, վոր նա ծառայել է վորպես հող, վորի վրա դասակարգային հակասությունները կարվածատերերի և գյուղացիության մեջ հասել են սրման ծայրահեղ աստիճանին: 19-րդ դարի կեսերի ճորտ գյուղացու դրությունն անտանելի յեր դարձել: Ճորտատիրական շահագործումը հասել էր իր «ընական սահմաններին» և նույնիսկ մասամբ անցել էր այդ սահմաններից: Ճորտատեր-կարվածատերը հասցնում է գյուղացիական տնտեսությունը մինչև կատարյալ անկում: Ճորտ գյուղացիության մասսան դարձել էր աղքատ և կանգնած էր իր բնաջինջ լինելու անմիջական սպառնալիքի առաջ: Ճորտատիրական շահագործման աճումը և ճորտատիրական ճնշման սաստկացումը կապիտալիզմի՝ յերկրի ժողովրդական տնտեսության բոլոր անկյունները թափանցելու պայմաններում առաջ է յյին բերում գյուղացիության կողմից ակտիվ ընդդիմադրություն: 40-ական թվականների վերջում և 50-ական թվականների առաջին կեսում գյուղացիական շարժումը հասնում է այնպիսի ծավալի և այնպիսի ուժի, վոր ճորտատիրության հետագա գոյությունն այլևս անկարելի յեր դարձել: Ռեֆորմից առաջ վերջին տասնամյակներում տեղի ունեցած գյուղացիական շարժումների հարցը կլինի մեր հետևյալ հոգվածի նյութը:





«Ազգային գրադարան»



NL0411415

